S-t Lazar

№ 214 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 214

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են խոշորանշիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67.

„ՄՇԱԿ" եւ „ՀՈՐԻԶՈՆ" թերթերի խմբագրութիւնները սրանով յայտարարում են ի գիտութիւն բոլորի, որ առաջիկայ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ից ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐԱՊԷՍ երկու թերթերի հատավաճառը 5 կոպէկի փոխարէն կը լինի 6 ԿՈՊԷԿ:

Տիկին Նազում Յովհաննիսեան Աղամիրզեանը, Աստղիկ, Սարգիս Աւետիսեանները եւ Մկրտիչ Աղամիրզեանը խորին վշտով յայտնում են—առաջինը իր թանկագին ամուսնու, երկրորդը և չորրորդը սիրելի հօր, իսկ երրորդը անմոռաց աներոջ՝ Վերին-Ագուլիսի բնակիչ

Պօղոս Յովհաննիսեան ԱՂԱՄԻՐԶԵԱՆԻ

մահը: Ամբիծը կը կատարվի չորեքշաբթի, ամսիս 30-ին Մուղնու ս. Գէորգ եկեղեցում, երեկ. ժամը 7-ին, իսկ թաղումը՝ հոկտեմբերի 1-ին, հինգշաբթի, Խօջիվանքի գերեզմանատանը: Պատարագի սկիզբն է առաւօտեան ժամը 10½-ին:

687. 2—1

Ամսիս 28-ին կարճատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց վերին-ագուլեցի

Պօղոս Յովհաննիսեան ԱՂԱՄԻՐԶԵԱՆՑԸ,

որի մասին անհուն վշտով յայտնում են բարեկամներին և ծանօթներին Եղիսաբէթ եւ Համազասպ Սաֆրազեաններն իրանց որդկերանցով՝ առաջինը իր սիրելի եղբօր, երկրորդն իր անմոռանալի աներձագի և վերջիններն իրանց թանկագին քեռու:

Ամբիծքն ամսիս 31-ին, երեկոյեան ժամը 7-ին, Մուղնու ս. Գէորգ եկեղեցում: Յուղարկաւորութիւնը հոկտեմբերի 1-ին, պատարագից յետոյ, Մուղնու եկեղեցուց դէպի Խօջիվանքի գերեզմանատունը:

689. 2—1

ՂԱԶԱԽԻ ԵՒ ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ շրջանների համար հարկաւոր են ֆելդշերներ եւ ֆելդշերուհիներ Ամսական 75 ր. ռոճիկ, անունդ և բնակարան: Դիմել՝ Կ. Հ. Բար. Ընկ. գրասենեակ (Абасъ-Абадская пл. № 7.)
տա. 691. 2—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տելէֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 1—12 առ.:
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Ցարումինեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշեր
Ս. Պ. Շահպարոնեանց
(չ. ու. կ.) տա 970. 100—93

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈԹՈՐԱԿՍՈՎ: Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌՕՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ: Ամեն օր. 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան: ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՁՐԻ: Бебутовская, 23. тел. 7—29.
տա. (ա. օ.) 504. 100—49

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ
Պլոմբ—ոսկուց, արծաթից, փարփօրից և այլն: Ատամի հեռացումը առանց ցաւի: Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթօդով:
Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից:
(ա. օ.) տա. 515. 100—38

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԲՌՆԱԾ ԴԻՐՔԸ

Ներկայ րոպէին ընդհանուր հետաքրքրութեան առարկայ է Բօլգարիայի հանդէս գալը և նրա բռնած դիրքը դէպի քառեակ համաձայնութիւնը:

Բօլգարիան աշխատեց հերքել Ռուսաստանի վերջնագրի մէջ իր վրա բարդված մեղադրական կէտերը և ցոյց տալ, որ երբ իր զօրահանութիւնը ուղղված չէ Ռուսաստանի դէմ: Փարիսեցիութիւնը, աչքակապութիւնն այնտեղ հասաւ, որ մինիստր-նախագահ Ռադօսլավօվը արտասվեց, երբ ռուսական դեսպանը յանձնեց նրան ուլտիմատումը, ասելով թէ նա բնաւ չէր կարծի, որ Ռուսաստանը կարող է իր ազատելի հանդէպ այդպիսի դիրք բռնել: Սակայն բոլոր դէպքերը ցոյց են տալիս հետզհետէ, որ Բօլգարիան սերտ դաշնագիր է կապել Գերմանիայի, Թիւրքիայի և Աւստրիայի հետ և կռւելու է երբև նրանց զինակից իր ազատարար Ռուսաստանի և նրա դաշնակիցներ Անգլիայի և Ֆրանսիայի դէմ: Ի հարկէ, նրա նպատակակէտը՝ Սերբիան է, որից պէտք է խլէ Մակեդօնիան և վերականգնէ «Մեծ Բօլգարիան»:

Բօլգարիայի այդօրինակ հանդէս գալը շատ բարդացնում է պատերազմական դրութիւնը, որովհետև մեր թշնամիների բանակը ստուարանում է մի նոր խիզախ ույժով. Բոլոր յոյսերը, ինչպէս անցեալ անգամ ևս յայտնեցինք, կայանում էին նրա մէջ, որ Բօլգարիայի դէմ դուրս կը գան, ուրեմն մեզ նիզակակից կը լինեն՝ Յունաստանը և Ռումինիան, որոնք ետ կը պահեն Բօլգարիան և կը կաշկանդեն նրա դիրքերը. բայց, դժբաղդաբար, այդ յոյսերը ի դերև են ելնում: Ռումինիան և Յունաստանը, ինչպէս այժմ պարզվում է, ամենայաւ դէպքում կը պահպանեն չէզոքութիւն, իսկ նրանց չէզոքութիւնը ներկայ դէպքում ձեռնտու է միայն մեր թշնամիներին:

Ուրեմն Բօլգարիայի ձեռները արձակ կը լինեն, և նա կարող է անպատիժ ու համարձակ իր հաշիւները տեսնել Սերբիայի հետ, օգնել Թիւրքիային օժանդակ զօրքերով և դրանով դժուարացնել Դարդանէլի առումը, բաց թողնել իր երկրի միջով գերմանական զօրքերին և այդպիսով կապել գերմանական և փոքր-ասիական կամ օսմանեան զօրքերն իրար հետ:

Արդ, ինչո՞ւ Ռումինիան և Յունաստանը այդպիսի սպասողական, չէզոք, երկմիտ դիրք բռնեցին այժմ, մինչ առաջ ռումէն և յոյն ժողովուրդները և նոյնիսկ կառավարութիւններն այլ տրամադրութիւն էին ցոյց տալիս և մինչ Բուխարէստի դաշնագրով Ռումինիան պարտաւոր է պաշտպանել Սերբիան Բօլգարիայի յարձակումներից: Ինչո՞վ բացատրել Ռումինիայի և Յունաստանի այժմեան բռնած տակտիկան:

Եթէ ուշադրութեամբ հետևենք մինչև այժմ անցած-դարձածին, պէտք է գանք այն եզրակացութեան, որ Ռումինիան այլ կերպ վարվել չէր կարող, եթէ ոչ սպասողական դիրք բռնել, այլապէս նա վտանգած կը լինէր իր գոյութիւնը:

Ամեն մի երկիր կամ ազգութիւն ներկայ պատերազմի ժամանակ ամենից առաջ որոնում է իր սեփական օգուտը, իր կենսական շահերը, չէ կամենում ենթարկել հայրենիքը արկածների և վտանգի: Ռումինիան կշռեց և տեսաւ, որ եթէ հանդէս գայ ընդդէմ Բօլգարիայի, աւստրո-գերմանական զօրքերը կը խուժեն իր երկիրը, և դա շատ մեծ վտանգ կը լինի նրա համար, որովհետև այն անորոշ դրութիւնը, որի մէջ գտնվում են գործերը մեր ռազմաճակատի վրա, թոյլ չէ տալիս հաւաստի լինել, որ աջողութիւնը Ռուսաստանի կողմը կը լինի: Իսկ եթէ աջողութիւնը Ռուսաստանի կողմը չը լինի, գերմանա-աւստրիական-բօլգարական-թիւրքական բլոկը կը ջախջախէ Ռումինիան անկանգնելի կերպով: Ուստի ռումէն հայրենասէրները և քաղաքագէտները, որոնցից շատ մանր ազգութիւններ պէտք է հայրենասիրութեան դասեր առնէին, աւելի ձեռնտու համարեցին պահել չէզոքութիւն, սպասողական դիրք բռնել, քան յախուռն գործողութիւնների մէջ մտնել, որոնք կարող էին նրա բնաջնջման պատճառ դառնալ: Ապագայում ի հարկէ, երբ աջողութեան նժարը թեքվի Ռուսաստանի-Անգլիայի-Ֆրանսիայի-Սերբիայի կողմը, Ռումինիան կարող է յարձակվել Բօլգարիայի վրա:

Գալով Յունաստանին, պէտք է ասել, որ նրան ամենից շուտ վտանգ սպառնում է ծովի կողմից, հետևաբար Ռուսաստանի և դաշնակիցների կողմից, ուրեմն նա պէտք է աւելի շուտ նիզակակցէր վերջինների հետ, ընդդէմ Բօլգարիայի, որի նկատմամբ նա միշտ թշնամական զգացումներ է տածել, և երկիւղ չը կրէր միանալ դաշնակիցներին: Յունաստանի ուղղակի շահը պահանջում է միանալ դաշնակիցներին, որովհետև նա կարող է հարստանալ Թիւրքիայի և Բօլգարիայի հաշւին, որովհետև բօլգարները և թիւրքերը միշտ եղել են նրա թշնամիները: Եւ ամբողջ յոյն ժողովրդի զգացումները Ռուսաստանի կողմն են: Սակայն եթէ այդ բոլորով հանդերձ Յունաստանն ևս չէզոքութիւն է պահպանում, պատճառը ոչ թէ այն հանգամանքն է, որ յունական թագուհին՝ Վիլհէլմ կայսրի քոյրը ազդել է իր ամուսնու վրա, այլ որովհետև դրութիւնը, պատերազմի ելքը այնքան անորոշ է, որ թոյլ չէ տալիս երկրի գոյութիւնը վտանգել: Չէ՞ որ եթէ գերմանա-աւստրիական-բօլգարական-թիւրքական բլոկը յաղթական դուրս գայ, Յունաստանի հետքը անգամ չի մնայ: Բայց կը գայ մի օր—և մենք կենդանի հաւատ ունենք, որ այդ օրը կը գայ—երբ Յունաստանը կը կարողանայ համարձակ բռնել դաշնակիցների կողմը և իր դարաւոր վրէժը լուծել Թիւրքիայից և Բօլգարիայից:

Հ. Ա.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
28 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կովկասեան զօրաճակատ: Իշխանի շրջանում (Ճորոխ և Օլթի գետերի միախառնվելու տեղում) թիւրքերը առաջխաղացման դիմեցին, բայց վանվեցին:

Մնացած ամբողջ ռազմաճակատի վրա էական բան տեղի չունեցաւ:

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
27 սեպտեմբերի

ՓԱՐԻԶ.—«Տան» լրագրին հեռագրում են Ալեքսանդրիայից, որ Երուսաղէմում բոլոր ֆրանսիական, անգլիական, ռուսական և իտալական վանքերը թիւրքերը ախոռանոցներ են դարձրել: Սամարիթայի դաշտավայրը և Զիթենեաց լեռը ծառայում են նորակոչ զինւորների վարժութիւնների տեղ: Գողգոթայի վրա թիւրք զօրքերը հրացանաձգութեամբ են զբաղվում գերմանացիների ղեկավարութեան ներքոյ:

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Կ. Պօլսից հաղորդում են, որ թիւրքաց պարլամենտը բանալու ժամանակ նախագահ Խալիլ-բէյը իր ճառի մէջ ասաց, թէ ներկայ պատերազմը կը յանգէ Թիւրքիայի համար շահաւէտ հետևանքների. այս պատերազմից յետոյ կը վերականգնվի հզօր մեծ պետութիւնների խմբակ՝ սկսած Հիւսիսային ծովից մինչև Հնդկական օվկիանոսը, որպիսի մեծ պետութիւնները առմիշտ կը միանան քառեակ համաձայնութեան մեծ պետութիւններին դիմադրելու համար:

—

(Լրագիրներից)

◆ «В. В.»-ին հեռագրում են Ցիւրիխից, որ Ֆէրդինանդ արքան սեփական ձեռքով գրած նամակ է ուղարկել թիւրքաց սուլթանին:

◆ «Б. В.»-ին հաղորդում են, որ Իտալիայի մասնակցութիւնը Բալկաններում՝ դաշնակիցների նոր գործողութիւններին՝ վճռվել է դրական մտքով:

◆ «Temps»-ը ասում է. «Կ. Պօլսի նուաճումը հանդիսանում է Դարդանէլի և Մակեդօնիայի ռազմական գործողութիւնների համահաւասար նպատակը: Այդ նպատակին հասնելու համար մեծ զոհաբերութիւններ չը կան: Մեր սխալը նրանումն է, որ մենք չափազանց երկար դանդաղում էինք»:

◆ Կ. Պօլսի գերմանական դեսպանը պահանջել է հիմնել գերմանացի խորհրդատուների պաշտօններ բոլոր մինիստրներին և շէյխ ուլ-իսլամին կից:

ՀԱՅԵՐԻ ԲՆԱՋՆՋՈՒՄԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Դիլօնը հեռագրում է «Р. В.»-ին Լօնդօնից. «Լօնդօնի լրագիրները ցնցող տեղեկութիւններ են տալիս Թիւրքիայի հայութեան բնաջնջման մասին: Այդ բնաջնջումը աւելի սիստեմատիքական է, քան 1896 թւի կոտորածը: Ի միջի այլոց մանրամասնվում է, որ Տրապիզոնի 10,000 հայ բնակիչները սրի են քաշվել մի օրում»:

—

«П. К.»-ը յօդուած է նուիրել այն նօտայի առիթով, որ Միացեալ Պետութիւններն ուղարկել են Թիւրքիային, Գերմանիային և Աւստրիային՝ Հայաստանում կատարվող գազանութիւնների առիթով: Լրագիրը կարծում է, որ Վիլսօնի բողոքը պէտք է ունենայ ռէալ հետևանքներ, բացի մօրալ հետևանքներից: Հայերի կեանքը գտնըվում է Բերլինի ձեռքում: Բաւական է, որ Գերմանիան իշխանական ձայն բարձրացնէ Թիւրքիայում, իսկոյն գազանութիւնները կը դադարեն: Եթէ Վիլսօնի բողոքին հետևէ սպառնալիք, թէ դիւանագիտական յարաբերութիւնները կը խզվեն Միացեալ Պետութիւնների և Գերմանիայի միջև, այդ էլ բաւական կը լինի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՆ

Ռուսական բանակը դէպի Հայաստան առաջանալով և հետզհետէ էն կարևոր քաղաքները գրաւելով, վերստին խնդրոյ առարկայ կը դառնայ Թիւրքաց-Հայաստանի ապագան: Տարակոյս չկայ, որ երբ հայկական նահանգները թիւրքական լուծէն ազատին, բնաւ չպիտի ուզեն կրկին թիւրքական իշխանութեան մասը կազմել, եթէ ենթադրենք նոյն իսկ որ խաղաղութեան դաշինքը կնքած պահուն, պետութիւնները օգտակար դատեն Ասիոյ մէջ առաւել կամ նուազ ուժեղ օսմանեան կայսրութեան մը գոյութիւնը: Ուրեմն պէտք է բնորոշել հայկական նահանգներու ապագան և անոնց տալ ազգային վերջնական կազմ:

Երկար ժամանակ հայերը քաղաքականապէս բոլորովին անկախ Հայաստան մը երազեցին: Այժմ կը թուի թէ հասկցեր են այսպիսի երազի մը իրականացման որքան դժուար և վտանգաւոր ըլլալը, քանի որ Հայաստանը ամբողջովին անկախ ըլլալով ոչ նիւթական ույժ և ոչ ալ ելեմտական աղբիւրներ պիտի ունենար իր սահմանագլուխները պաշտպանելու համար: Նա միայն կը պահանջէ իր ինքնավարութեան ապահովութիւնը, իր լեզուի և աւանդութիւններու ազատութիւնը, հայ ցեղի ազգային վերահաստատութիւնը:

Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը վերջերս հրատարակած իր կոչին մէջ կըսէ. «Հայ ազգի միահամուռ բաղձանքին արտայայտիչը կը կարծենք ըլլալ, պահանջելով Հայաստանի ինքնավարութիւնը դաշնակից պետութիւններու հովանաւորութեան տակ»: Ասկէ աւելի արդար և օրինաւոր բաղձանք չըլլար: Նաւպէս այս խնդրոյն մէջ դաշնակից պետութիւնները խօսքը Ռուսաստանին պիտի տան, որովհետև հաւանական չէ որ Ֆրանսան, Անգլիան, Իտալիան ուղղակիօրէն ուզեն մասնակցիլ այս հարցի կարգադրութեան: Արդէն Թիւրքիոյ հայերու Ռուսաստանի հետ յարաբերութիւնները խիստ սիրալիր են: Անոնք են որ դիւրացուցին ռուսական բանակներու յառաջխաղացումը, պատրաստեցին ճամբաները, և եթէ այսօր ռուսերը Վան հաստատուած են, մասամբ կը պարտին հայերուն ապստամբութեանը, որ դուրս վանեց թիւրքական զօնդերը:

Արդէն Ռուսաստանը կովկասահայերու հանդէպ ազատական քաղաքականութեան մը ձեռնարկած է տարիներէ ի վեր: Պէտք է ընդարձակել այս ռեժիմի ազատականութիւնը Փոքր Ասիոյ հայկական նահանգներուն վրայ: Այն ատեն Ռուսիա այս նահանգներու բնակչութեան մօտ պիտի գտնէ էն անկեղծ ուղղամտութիւնը:

(«Dépêche de Toulouse») C. V.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
28 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ֆրիդրիխշտադտից դէպի հարաւ-արևմուտք մեր «Իլիա Մուրոմէց» տիպի աէրօպլաններից նետեցին մօտ 75 ռումբ Վայդհօֆ և Տաուրկալն գիւղերի վրա: Հետևանքն աջող էր:

Դվինսկի շրջանի զօրաճակատի վրա մեր զօրքերը շատ տեղերում կատաղի կռիւ էին մղում գերմանացի զօրքերի դէմ, որոնք մի քանի անգամ յարձակման դիմեցին: Դվինսկից դէպի հիւսիս-արևմուտք մեր զօրքերը նոր յարձակումով վռնդեցին գերմանացիներին Գորբունովկա գիւղից: Դվինսկի խճուղու շրջանում՝ Դվինսկից դէպի հարաւ-արևմուտք գերմանացիք քշվեցին Լաուցէս-Գէյ և Գիրվիկի միջև ընկած խրամատներից: Հետապնդելով նրանց, մենք տիրեցինք մինչև Լաուցէս-Գէյ ընկած տարածութեան:

Դեմմէն և Դրիսվեատա լճերի զօրագծի վրա երէկ մինչև մութն ընկնելը հրային կռիւ էր:

Գերմանացի օդագնացները ռումբեր նետեցին Դվինսկի և մօտակայ երկաթուղային կայարանների վրա:

Հակառակորդը փորձեց առաջանալ Լիւբկի մօտից Վերին Նէմանի մօտ, բայց մենք խափանեցինք այդ փորձը:

Կօվէլ-Սարնա շրջանում մի քանի ընդհարումներ եղան դէպի Սարնի գետը առաջացած թշնամու զօրամասերի հետ: Մեր արտիլերիան շատ դէպքերում հնարաւորութիւն ունէր սպանիչ կրակ արձակել հակառակորդի զօրքերի վրա:

Սէմկի գիւղի մօտ տեղի ունեցած յամառ կռւից յետոյ, մեր զօրքերը գրաւեցին հակառակորդի խրամատները:

Կօլկիից դէպի հարաւ-արևելք մեր զօրքերը թնդանօթային կրակի պաշտպանութեամբ ձեռք ձգեցին Չէրնիշ գիւղի արեւելեան մասը, Մէլիշչէ գիւղը և Գրօխոտի աւանը, կրելով շատ աննշան կորուստներ: Մօլանիցա և Սիլնօ գիւղերի շրջանում՝ Դէրժանօյից դէպի արեւմուտք, մենք վանեցինք թշնամու 8 հակայարձակումը:

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

27—28 սեպտեմբերի

ՓԱՐԻԶ.— Պաշտօնական հաղորդագրութիւններ.

Բելգիայում, Լոմբարցիդէի շրջակայքում, Արտուայի ամբողջ զօրաճակատի վրա տեղի է ունենում թնդանօթային կռիւ: Զաւփաղից տաք ճակատամարտ թնդանօթների մասնակցութեամբ տեղի էր ունենում Լիգոնի շրջանում և Ավլեից դէպի հիւսիս: Մենք կրկին առաջացանք Շամպանիում՝ Տազիւրից դէպի հիւսիս-արեւելք, ձեռք ձգելով գերմանական մի խրամատ: Ուժեղ թնդանօթային կռիւ տեղի էր ունենում Արգոններում, նաև Մաասի և Մօզէլի միջև: Կատաղի կռիւ ձեռքի ռումբերով տեղի էր ունենում Վօգեզներում:

Մեր օդագնացները ցած իջեցրին գերմանական «տաուբէ», որ ընկաւ մեր զօրագծերի մօտ. գործիքի մէջ գտնվող երկու օդագնացները սպանվեցին: Մեր աէրօպլանները մօտ 100 ռումբ նետեցին Շամպանիում՝ զօրաճակատի ետևում գտնվող երկաթուղային կայարանների և թշնամու զօրքերի վրա:

ՀԱՎՐ.— Բելգիական հաղորդագրութիւնը յայտնում է, որ երէկ առաւօտեան տեղի էր ունենում կատաղի կռիւ Բիքսշոտէի առաջ:

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 սեպտեմբերի

ՀՌՈՄ.—Գլխաւոր բանակը յայտնում է. Թշնամին եռանդուն գործունէութիւն է ցոյց տալիս ամրութիւններ կառուցանելով և երկաթուղագծերը նորոգելով, որոնք խիստ փչացել են մեր թնդանօթային կրակից և մեր հետևակ զօրագնդերի խիզախ արշաւներից:

Թշնամու բաւական մեծաքանակ ույժեր՝ Իզօնցօ գետի հովտում սկսած 27-ի ցերեկով և լոյս 28-ի գիշերը, թնդանօթաձգութիւնից և ձեռքի ռումբեր նետելուց յետոյ, փորձեցին յարձակվել գործել Պլէցցօյի առաւաղի մեր դիրքերի դէմ, բայց ամենուրեք վանվեցին իրանց համար մեծ կորուստներով և թողնելով գերիներ մեր ձեռքում:

ՍԵՐԲ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՍԵՐԲ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 սեպտեմբերի

ՆԻՇ—«Պրէսս-Բիւրօն» հաղորդում է. «Մեր զօրքերը հրաժարվեցին Բելգրադի պաշտպանութիւնից և նահանջեցին դէպի քաղաքից դուրս գտնվող դիրքերը, որպէսզի թշնամին դադարեցնէ քաղաքի ռմբակոծութիւնը լայնաբերան թնդանօթներով. Բելգրադը գրաւելով թշնամին չը ստացաւ ոչ մի առաւելութիւն զինուորական տեսակէտից»:

ԱՒՍՏՐՕ-ՉԵՐՆՕԳՕՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 սեպտեմբերի

ՑԵՏԻՆԻԷ.—«Պրէսս-Բիւրօն» հաղորդում է, որ աւստրիական առաջխաղացումը ըսկսվեց համարեա ամբողջ չերնոգորական զօրաճակատի վրա: Աւստրիացիք ջանացին անցնել Դրինան երեք տեղում և եռանդով յարձակվում գործեցին չերնոգոր զօրքերի վրա՝ Բոսնիայի շրջանում: Միաժամանակ աւստրիացիք յարձակվեցին Գրախովոյի վրա, բայց ամենուրեք վանվեցին խոշոր կորուստներով:

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 սեպտեմբերի

ԿԱՀԻՐԷ.—Բրիտանական զինված ույժերի հրամանատարի կարգադրութեան համաձայն, Եգիպտոսում բնակվող բուլղարահպատակները պէտք է ցուցակագրվեն ոստիկանութեան ձեռքով և պէտք է ներկայացնեն վաւերագրեր: Կարգադրութիւնից խուսափողները կենթարկվեն բանտի:

ՀՌՈՄ.—Արտասահմանեան մամուլի գործիչների ասօցիացիայի ընդհանուր ժողովը որոշեց հանել բոլոր աւստրիահպատակների և գերմանահպատակների անունները:

ԼՈՆԴՈՆ.—Ջրասուզվել են յունական «Դիմիտրիօս» և բրիտանական «Նիւկէսալ» շոգենաւերը. նաւաստիներն ազատվել են:

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Բուլղարիայից հաղորդում են, որ Դունայի նաւահանգիստները լի են ականներով:

ԿԻԵՎ.—Բուլղարական գաղութի անդամների ժողովը բանաձևով բողոք է յայտնում բուլղար կառավարութեան դէմ, որ ձգտում է Բուլղարիայի բաղդը կապել տևտոն ցեղերի բաղդի հետ: Ժողովը հեռագիրներ ուղարկեց բուլղար օպպօզիցիայի պարագլուխներին, յորդորելով փրկել կործանվող հայրենիքը թշնամուց, որ արդէն ոտք է դրել բուլղար տան շէմքը:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Կառավարութեան կարգադրութիւնների ցուցակում կան ի միջի այլոց հետևեալ օրագրական որոշումները, որոնք արժանացել են Բարձրագոյն հաստատութեան. արգելվում է արտասահման արտահանել ոսկի, զինուորական պարտադիր ծառայութեան կոչել 2-րդ կարգի երկրապահ զինուորներին մէնօնիտներից և նշանակել վերջնական գներ լուցկիների վրա ու աւելացնել նրանց ակցիզը:

Ի պատասխանի Պետրօգրադի նահանգական ազնուականութեան ժողովի հեռագրի, որով արտայայտված էր հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ, ազնուականութեան պարագլուխը բաղդաւորվեց ստանալ հետևեալ հեռագիրը.

Սրտանց շնորհակալ եմ Պետրօգրադի ազնուականութիւնից զոհաբերելու պատրաստակամութեան, արտայայտած հաւատարմութեան զգացմունքների և յաղթութիւն բարեմաղթելու համար: Հաստատ հաւատում եմ, որ Աստծոյ ողորմութեամբ և Ռուսաստանի բոլոր հաւատարիմ զաւակների համերաշխ աջակցութեամբ մեր քաջարի զօրքերը մօտիկ ապագայում կը խորտակեն յամառ թշնամու դիմադրութիւնը.

ՆԻԿՈԼԱՅ

Առեւտրի մինիստրը կարգադրել է. այն մասնաւոր անձինք, ընկերութիւնները և բանկերը, որոնք պարապում են բամբակի առևտրով կամ ունեն բամբակ պատրաստող գործարաններ, պարտաւոր են բամբակի հարցով զբաղվող մասնաժողովի պահանջով տեղեկութիւններ տալ իրանց մօտ եղած բամբակի պաշարի մասին:

Փախստականների հարցով զբաղվող յանձնաժողովը գտաւ, որ պետութիւնը պէտք է իր վրա վերցնէ փախստականներին հագցնելու գործը, ուստի և գլխաւոր լիազօրութեան վարչութիւնը համաձայնեց յանձնել ներքին գործերի մինիստրի կարգադրութեանը մի միլիօն հատ սպիտակեղէն.

ՍՏՕԿՀՕԼՄ.— Հակառակ բուլղար կառավարութեան յայտարարութեան, շվէդական լրագիրներին հաղորդում են Բեռլինից, որ գերմանացի օֆիցէրները ստանձնել են Դէդէաղաչ և Պորդ-Լագոս նաւահանգիստների կառավարութիւնը, ուր դրվում են ծանր թնդանօթներ: Այդ երկու նաւահանգիստները պէտք է ծառայեն ռազմակէտ՝ գերմանական սուզանաւերի համար:

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՅՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 սեպտեմբերի

ԱԹԵՆՔ.—Աւստրօ-գերմանացիների՝ Սերբիայի դէմ առաջանալու առիթով «Պատրիս» լրագիրը գրում է. «Յունաստանը համակրութեամբ և աչալրութեան բարեխաւութեամբ է հետևում Սերբիայի հերոսական կռւին: Սերբիան պէտք է յաղթէ, այդ է կամենում Յունաստանը, որովհետև բուլղարական հեգէմօնիան գլուխ է բարձրացնում Բալկաններում»:

Մինիստր Ռալլիսը յայտնեց «Նէա-Էիմէրայի» աշխատակցին, որ նոր կաբինէտի արտաքին քաղաքականութիւնը կախված կը լինի սերբ-յունական պայմանագրի քննութեան հետևանքներից:

Զայմիսի կաբինէտը այսօր պարլամենտին կը ներկայացնէ իր ծրագիրը: Կառավարական լրագիրները մատնանշում են, որ կառավարութիւնը չէզոքութիւն է պահելու մեծ պետութիւնների երկու խմբակների վերաբերութեամբ բարեացակամ նրանցից այն կողմի, որի հետ Յունաստանը կապված է տրադիցիաներով և շնորհակալութեան զգացմունքով.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Ռուսաստանի և Գերմանիայի միջև ինվալիդների փոխանակութիւնը դադարեց: Այդ բանը պաշտօնապէս բացատրվում է նրանով, թէ իբր Ռուսաստանը ճշգրտութեամբ չէ կատարում համաձայնութիւնը: Ռուսաստանի տւած բացատրութիւնները Գերմանիան անբաւարար գտաւ: Իսկական պատճառն այն է, որ ներկայումս Գերմանիայում բոլոր երկաթուղիները զբաղված են զօրքեր տեղափոխելով, ուրից մասնաւոր հաղորդակցութիւնը կանգ է առել:

◆ Իտալական մի զօրաբանակ ուղարկված է Սալօնիկ դաշնակիցներին օգնութեան:

◆ Ռուս ուսանողներին զինուորական ծառայութեան են կանչելու դեկտեմբեր ամսից:

◆ Անգլիան պատուիրել է Միացեալ Պետութիւններում 250 մեծ բիպլան:

◆ Բուխարեստից հեռագրում են «Р. В.»-ին, որ բուլղարական զօրքերի կենտրոնացումը սերբիական սահմանի վրա առաջացած է: Հնարաւոր է, որ Բուլղարիան ակտիվ գործողութիւնների չը դիմէ և կաշկանդէ միայն՝ իր կողմը պարձնելով սերբ զօրքերի ուշադրութիւնը, հեշտացնել աւստրօ-գերմանացիների գործը:

◆ «Р. В.»-ին Բէլօրուսովը հեռագրում է Պարիզից. «Պարիզի շրջանները կարծում են, որ դաշնակիցներին անհրաժեշտ է գործել արևելքում աւելի մեծ ծաւալով: Ոմանք պահանջում են արևելք ուղարկել ֆրանսիական մի ամբողջ զօրաբանակ, իսկ ոմանք էլ պնդում են, թէ զօրքեր ուղարկելու են Անգլիան, Իտալիան և Ռուսաստանը»:

◆ Այս օրերս Ֆէրդինանդը տեսակցելու է գեներալ Սանդէրսի հետ Ֆիլիպպօպօլում:

◆ Պարիզի լրագիրները հաղորդում են, որ Թիւրքիան իր զօրքերին ուղարկելու է բուլղարական Վառնա և Բուրգաս նաւահանգիստները, որովհետև բուլղարական կառավարութիւնը անհնարին է գտնում հարկադրել բուլղար զօրքերին՝ կռիւ բռնել այդ նաւահանգիստներում ռուս զօրքերի հետ:

◆ Բուլղարական ռազմանաւերը Դունայի վրա բռնել են ռուսական «Բոլգարիա» շոգենաւը:

◆ Մեծ ճակատամարտ է սկսվել Կրեմէնցի շրջանում:

◆ «Р. У.»-ն հաղորդում է, որ Սօֆիայում Պլէվնէի գունդը հրաժարվել է արշաւանքի գնալ: Գնդին չէզոքացրել են. օֆիցէրները յանձնված են զինուորական դատարանի:

ԲՈՒԼՂԱՐԻԱՆ ԵՒ ՊԱՆԳԵՐՄԱՆԻԶՄԸ

(Ճակատագրական աւանտիւրայի երկրորդ օրինակը)

II

Պատերազմի սկզբից սկսած, չէզոքութեան ամբողջ շրջանում, Բուլղարիայից լսվում էր շարունակ մի տըրող մօնոտօն ձայն: Բուլղարիան չը պէտք է երկրորդ անգամ նետէ իրան ճակատագրական աւանտիւրայի գիրկը, այլ պիտի օգտագործէ արդի պատերազմի ընթացքում այն մօմենտը, որը ամենամեծ չափերով կը նպաստէ նրան իր ազգային խնդիրների իրականացման համար:

Այսպէս էին բարբառում քաղաքական շրջանները և մամուլի ներկայացուցիչները Բուլղարիայում, ասել է՝ ողջ պաշտօնական Բուլղարիան: Դա իրաւ, զգոյշ դիւանագէտի յատուկ ու ակնկալող մի քաղաքականութիւն կը լինէր, եթէ տուեալ մօմենտի ընտրութեան համար չը բացակայէին պահանջվող խելահասութիւնն ու հեռատեսութիւնը: Կարևորը ոչ միայն պատերազմող ույժերի յարաբերութիւնների ճիշդ գնահատումն է, այլ և պատերազմի հետևանքների կամ աւելի պարզ՝ յաղթող կողմի նուաճած արդիւնքների դասաւորութեան ապահով կացութիւնը:

Ո՛րքան ճիշդ է եղել արդեօք այդ տեսակէտից Բուլղարիայի ընտրութիւնը: Իր ճակատագիրը որոշելու համար նա ազատ ու անկախ էր կատարելապէս: Նա ընդգրկված չէր Թիւրքիայի նման Գերմանիայի երկաթէ բազուկների մէջ դեռ մինչև պատերազմը և ունէր ժամանակ երկար ծանրախորհելու իր ընտրութեան համար:

Եթէ Ֆէրդինանդի կառավարութիւնը շատ համարձակ ժեստով երես դարձրեց Եւրոպայից և անվերապահօրէն փարվեց պանգերմանիզմի գրօշակին, ապա դա նշանակում է, ըստ երևոյթին, որ Սօֆիայի կաբինէտը համոզված ու գիտակից վերաբերմունք է ունեցել դէպի առաջադրված երկընտրանքը: Կամ պիտի մնանար նա քառեակ համաձայնութեան և զէնքի ույժով միացնելով Թրակիան Բուլղարիային՝ շարունակէր կռիւը Թիւրքիայի դէմ, յետագայում՝ պատերազմից յետոյ՝ Սերբիական Մակեդոնիան ստանալու յոյսով. կամ թէ պիտի կապէր նա իր պետութեան բաղդը գերմանական զէնքի յաջողութեան հետ և սկզբից ստանալով տերրիտորիական զիջումներ Թրակիայում, ի հաշիւ Թիւրքիայի, զէնքի ույժով միացնէր վիճելի Մակեդոնիան Բուլղարիայի հետ:

Ֆերդինանդ-Ռադօսլավովի կառավարութիւնը ընտրեց երկրորդը: Մօմենտի այդ ընտրելակերպը նախադրում է անհրաժեշտօրէն մի բան. այն, որ բուլղար կառավարութիւնը հաւատում է գերմանական զէնքի վերջնական յաղթանակին և կամ գերմանական զէնքի ապահով յաղթանակի համար կարևոր են Բուլղարիայի նման զօրավիգ ույժեր: Այդ՝ մէկ: Երկրորդ՝ պաշտօնական Բուլղարիան համոզված է իր ընտրութեամբ, որ իր «ազգային իղձերը», «բուլղար ազգի քաղաքական իդէալը» անթերի կիրականան, եթէ Գերմանիան յաղթանակով ելնէ համաշխարհային ողբերգութեան բովից:

Մի կողմ թողնենք այդ նախահաշուեկշռի մէջ հաւատի հարցը՝ այս կամ այն կողմի վերջնական յաղթութեան վերաբերեալ. աչքաթող անենք նաև այն ըստ ինքեան հասկանալի հարցը, թէ ինչ ողբերգական վախճան կունենայ Գերմանիային յարած պաշտօնական Բուլղարիան՝ քառեակ համաձայնութեան յաղթութեան դէպքում: Վերցնենք մի կէտ միայն. որքան ճիշդ է ըմբռնել արդի բուլղար կառավարութիւնը՝ բուլղար պետութեան կենսական շահերը և բուլղար ազգի ինքնանկախ զարգացման տենդենցները:

Ոչ իբրև ենթադրութիւն, այլ խորին համոզմունքով կարող ենք ասել, որ Բուլղարիան չափազանց վտանգաւոր մակարդակի վրա է դրել իր պետական ազատ գոյութեան հարցը և Թիւրքիայի նման գլորվել է ճակատագրական աւանտիւրայի գիրկը: Ինչպէս Թիւրքիան, այնպէս էլ Բուլղարիան դարձան պանգերմանիզմի խայտառակ զոհերը, և չը կայ նրանց փրկութիւն ոչ մի դէպքում՝ ոչ Գերմանիայի վերջնական պարտութեան և ոչ վերջնական յաղթութեան դէպքում:

Գերմանիայի վերջնական յաղթութիւնը ուրիշ բան չի նշանակի, միջազգային յարաբերութիւնների տեսակէտից, բայց եթէ միջազգային - քաղաքական յարաբերութիւնների հաւասարակշռութեան սիստեմի վերացումը մեծ պետութիւնների մրցադաշտից և նրա փոխարէն գերմանական ճնշիչ հեգեմօնիայի տիրապետութիւնը Եւրոպայում: Մանաւանդ քրօնիքական ճգնաժամի տօն տուող այնպիսի կէտեր ու հարցեր, ինչպէս Մերձաւոր Արևելքի կնճռոտ պրօբլէմներն են, պիտի կորցնեն իրանց մինչև այժմեան կայուն յենակէտերը պետութիւնների քաղաքական կոնցէրտում և բացառապէս գերմանական շահերի տեսակէտից լուծվեն ու տնօրինվեն: Ո՞վ է այն խենթ ու խելառը բալկանեան թզուկներից, որ խաբվելով Բեռլինի դիւանագէտների սիրաշահ, հրապուրիչ խոստումներից՝ գալիս է այսօր և անգիտակ գործիքի նման զօրավիգ հանդիսանում, որ պանգերմանիստական հեգեմօնիան յաղթանակէ ի վերջոյ, որ եւրոպական հաւասարակշռութեան սիստեմը—որի պահպանման սիւներն են ազատ Անգլիան ու Ֆրանսիան—տեղի տայ պրուս-

---

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԲՈՒԼԱՆԸԿ*)

III

Անվերջ անձրևներից հալված ձիւներից Մուրադն աստիճանաբար բարձրացաւ, ծածկեց ափերը ինչպէս կղզու, նոյնպէս և ցամաքի, այնպէս հեղեղվեց, որ այլ ևս անհնար էր ձիով կամ լողանալով կղզուն մօտենալ: Համբարձման առաւօտ խարազլցիները մնացին շուարած, երբ տեսան իրանց շրջապատված վարարված գետով և կատաղած քիւրդերով: Լոյսի հետ սկսեցին երկու կողմից իրար դիմաւորել հրացանի գնդակներով: Քիւրդերն ունէին կառավարութիւնից իրանց բաժանված գերմանական «Մաուզեր» հրացաններ, հայերի զէնքերը խառն էր, կային և՛ «Մուզդալի», և՛ «Մաուզէր» և ուրիշ տեսակ զէնքեր:

Բարեբաղդութիւնն այնտեղ էր, որ հայ տղերքը ամեն պատրաստութիւն ունէին և կարողանում էին իրանց զէնքերը ոչ միայն մաքրել, նորոգել, փամփուշտները լցնել, այլ նոր փամփուշտներ պատրաստողներ էլ կային փախստականների մէջ, որոնք անխոնջ աշխատելով կարողացան 13 օր կռւել և դիմադրել քիւրդերին, առանց զգալի կորուստի: Քիւրդերը ինչպէս բռնել էին գետափը Խարազլի կողմից, այնպէս էլ նրանց օգնութեան էին հասել միւս ափից, պաշարել էին հայերի խիզախ դիմադրութիւնը:

Ամբողջ 15 օր քիւրդերը պաշարված հայերի դէմ կռւելիս մեծ կորուստներ ունեցան, շատերը վիրաւորվեցին և աւելի շատերն ընկան, բայց դիրքերն այնպէս էին պատսպարում հայերին, որ նրանք ոչ մի կորուստ չունեցան: Այս կատաղի կռիւը շարունակվում էր, Մուրադն էլ կատաղած

վարարվում, չէր թողնում ջուրն անցնելու ոչ պաշարողներին, ոչ էլ պաշարվածներին: Ափսոս, որ հայերի փամփուշտն ու ալիւրը քիչ էր և աղ չունէին:

Քիւրդերը, լսելով որ իրանց համազգիներն ու ցեղակիցներն սկսել են թալանել Բուլանըխի միւս գիւղերը, թողին պաշարվածներին, գնացին անպատսպար և անզէն ժողովրդի ջանին կրակ դարձան: Քիւրդերի կոտորածին մատնվեցին Ագրակի, Կողակի, Շէյխվալիի, Կեաօլզանի, Համզաշէխի, Շիրվանշէխի գիւղացիները. քիւրդերը ոչ միայն անողորմ կերպով ջարդեցին անզէն հայերին, թալանեցին, կողոպտեցին տարան, այլ նոյնիսկ առևանգեցին, յափշտակեցին, տարան գեղանի աղջիկներին, մատաղ երեխաներին և ժայռերին խփելով փշրեցին կաթնակերներին:

Կոտորածի ենթարկվեցին նոյնպէս Նորագին, Խասմիկ, Դուզնակ, Խարա-Խասմիկ, Ն.-Խանօղլի գիւղերը: Խժդժութիւնները Բուլանըխի գիւղերի մէջ շարունակված ժամանակ նեղութիւնը ճնշեց ևս կղզին ապաստանած խարազլցիներին, որոնք թէև առատ միս ունէին, բայց հացները շատ սակաւ էր և աղ բոլորովին չէին վերցրել: Անհրաժեշտ էր մի կերպ դուրս գալ կղզուց: Ուստի 75 կով մորթեցին, մորթիներից տիկ հանեցին, որպէս զի քեալակ (լաստ) պատրաստեն և դուրս գան կղզուց, քանի որ Մուրադը յամառ, անվերջ վարարված էր գալիս և չէր զիջանում ճանապարհ տալու լողորդներին:

Ութն օրից յետոյ խարազլցիների հացը բոլորովին սպառվեց և արդէն երկու քեալակ ունէին պատրաստած: Տէր-Յարութիւնը 30-ի չափ երիտասարդներով գիշերն անցաւ Մուրադը և շրջակայ գիւղերից—որոնց թողել ու փախել էին—սկսեց պարկերով ալիւր փոխադրել կղզի և 3—4 օր այսպէս էլ

բէք չէին ունեցել, քանի որ նրանց գիւղի մօտ աղի աղբիւր կայ, որից օգտվում էին անխափան: Միայն կղզու վրա զգացին թէ ի՛նչ մեծ կորուստներ ունեցան թշուառ գիւղացիները:

Բայց ինչպէս առանց աղի ու մսի կերակուրն անհամ է, անախորժ, այդպէս էլ տիկը առանց աղի անպէտք է և շուտ պատռվող, բայց անճարացած՝ չորս մեծամեծ քեալակներ շինեցին, տիկերն իրար կապած, որոնց վրա սայլերի երկայն կողերն ու ձողերը շարեցին, նրանց վրա հարիւրական մարդ ու ապրանք դասաւորելով անց կացրին գետը: Երկու օրվան մէջ թէ կռւեցին քիւրդերի դէմ, թէ ջուրն անցան և թէ պատրաստվեցին անցնել դէպի Ռուսթէմ գեաղուկ, ռուսական բանակը: Միայն վերջին քեալակները անցնելիս չը կարողացան 6 հոգի վերցնել, քանի որ հեռու էին, և միայն դրանք գերի ընկան քիւրդերի ձեռքը:

1550 հոգուց արդէն մի մասը ջրի մէջ խեղդվեց, մի մասը գերի ընկաւ, մի մասն էլ ճանապարհին քիւրդերի հետ կռւելիս կոտորվեց, միայն 975 հոգի անվնաս և անվտանգ ազատվեցին և հասան Իգդիր:

Աջողեցան Խարազլի գիւղացիները, ոչ միայն դիմադրեցին քիւրդ հրոսակներին, Մուրադի յորձանքներին, այլ նրանք իրանց 46 հրացանակիրներով շրջապատված, կռւելով և մաքառելով մայիսի 15-ին հասան Ռուսթէմ-գեաղուկ, դիմաւորեցին ռուսական բանակին, ինչպէս իրանց միակ ազատարարներին:

Խարազլցիներին հետևեցին միւս բոլոր գիւղերից փախչող հայերը, հասան ռուսական բանակ և նրանց հետ գնացին մտան Մանազկերտ ու պատսպարվեցին:

Խարազլցիներից 191 տնից—1550 հոգուց—գերի ընկան, սպանվեցին և մեռան

Իգդիր յուլիսի 23-ին, երբ մեր բանակը պարտաւորված էր նահանջելու:

Համզաշէխի 111 տնից հայերից 151 հոգի, Շիրվանշէխի 200 տնից հայերից միայն 75 հոգին ազատվեցին թիւրքի և քիւրդի զուլումից, հասան Իգդիր, մնացեալը—3000 հոգու չափ—սրի ու կրակի ճարակ դարձաւ:

Ագրակ և Կողակ գիւղերից 13 հոգի ազատվեցին. 1000 մարդուց աւելի ջարդվեցին քիւրդերի անգթութիւններով:

Նորագին, Խասմիկ, Դուզնակ և Խարա-Խասմիկ գիւղերի 400 տնից—4000 հոգի—հայերից գրեթէ մարդ չի ազատվել: Մեծամասնութիւնը անգթաբար կոտորեցին, աղջիկներին բաժանեցին իրանց մէջ, երեխաներին էլ վերցրին իրանց տները, թլփատեցին և քիւրդացրին: Ոչ միայն շարժական գոյքերը յափշտակեցին, այլ և տիրացան ամբողջ գիւղերի հողերին:

Բուլանըխից Կովկաս եկած փախստականների մեծագոյն մասը զետեղված է Ալեքսանդրօպօլի գաւառում, ամենադիմացկուն և ուժեղ տարրն է կազմում, որ ամեն միջոցի դիմում են՝ օր առաջ վերադառնալ իրանց ծննդավայրը: Սկզբում նրանց թոյլ էր տրված Ռուսթէմ-գեաղուկ և Մանազկերտ իրանց 46 հրացանները քաջերին վայել յաղթանակով կրել իրանց վրա, բայց Մանազկերտում կառավարչական հրամանով նրանցից խլեցին այդ զէնքերը:

IV

Ներքին Բուլանըխ

Ներքին Բուլանըխի գաւառակը միացած է Վերին Բուլանըխին, որոնք երկուսը միասին մի կազա են կազմում, բայց Ներքին Բուլանըխի Լիզ գիւղում նստում է կայմակամի օգնական միւդիրը, որը կառավարում է Ներքին Բուլանըխի վարչական բոլոր գործերը: Դատաստանական, հողային (ա-

րիշ կազայի հաստատութիւնները կենտրոնացած են Կոփում, ուր դիմում է ամբողջ կազայի ազգաբնակութիւնը իր գործերի համար. իսկ Լիզի միւդիրը միայն ոստիկանական գործերն է կառավարում:

Լիզում 200 տուն հայ է ապրում և այդքան էլ թիւրքացած ու քիւրդ կան, որոնք սարըկցրել են հայերին: Ամբողջ գիւղի հասոյթը իւրացրել են քիւրդերը և թիւրքացածները, իսկ հայերը ապրուստ չեն ձեռք գցում, թէև ամենածանր աշխատանքը, արդիւնաբերութիւնն ու արդիւնագործութիւնը նրանք են կատարում:

Ներքին Բուլանըխ գաւառակի գիւղերի մեծամասնութիւնը քիւրդերի ձեռքին է. փոքրաթիւ են քիւրդացած ու թիւրքացած հայերը, որոնք երկու-երեք տարվայ ընթացքում այնպէս են այլասերված և խորթացած, որ քիւրդերից ու թիւրքերից աւելի դաժան դահիճ են դարձած հայերի համար: Ներքին Բուլանըխի մէջ 13 հայկական և խառն գիւղեր կան, որոնց մէջ ապրում էին 770 տուն հայեր, մօտաւորապէս 8600 հոգի:

1) Ալըրի 30 տուն, 2) Մօլլաքենդ 35 տուն, 3) Բոստանքենդ 135 տուն, 4) Ալագեազ 6 տուն, 5) Խօզգեալդի 120 տուն, 6) Տէրափ 11 տուն, 7) Նազուկ 13 տուն, 8) Ցատկօն 45 տուն, 9) Փըրչէն 60 տուն, 10) Կոպօ 70 տուն, 11) Խաչլու 12 տուն, 12) Նորշէն 36 տուն և 13) Լիզ 200 տուն:

Երբ Մուշի դաշտի մէջ լուր բերին քիւրդ ձիաւորները—համիդիէ—թէ հայ կամաւորները, հակառակ իրանց խոստման, չարաչար կոտորում են կռւի ընթացքում քիւրդերին, երբ Բուլանըխից, Մուշի դաշտից և շրջակայքից Կովկաս եկած և կամաւորների շարքերը խառնված զինուորները կռւի ընթացքում գոռգոռալով սպառնալիքներ էին տեղացել քիւրդերի և նրանց առաջնորդների հասցէին և այդ բոլորը հասել էր Խաթթի Դէմուրչի գիւղը ամբողջ գերմանական ռէակցիայի եւրոպական հեգեմոնիային։

Բօլգար կառավարութիւնը սահմանեց այդ տխուր դերը. նա ծանր պատասխանատուութեան տակ ընկաւ ոչ միայն Եւրոպայի, այլ և սեփական հայրենիքի առաջ։ Գուցէ Ֆէրդինանդ արքան քաղցր երազներ է տեսել, և Վիլհէլմ II-ը իր մասնաւոր նամակների մէջ հաւաստիացրել է իր ցեղակցին, որ նա Ցարգրադում բազմած հզօր արքայի գահն կը ժառանգէ և կը փռէ Բալկաններում իր հեգեմոնիան։

Իրապէս, բօլգար քաղաքագէտների նախահաշիւները սին իլլիւզիաներ են, իսկ որոշումները՝ ճակատագրական սխալներ։

Բօլգարիան դատապարտուած կը լինի միայն Գերմանիայի համար սոսկ շահագործութեան ենթակայ գաղութ դառնալու, որի վրայից ազատ ճանապարհ կը հարթէ Գերմանիան դէպի մի աւելի շահաւէտ գաղութ մայրաքաղաքը՝ Թիւրքիայի սիրտը։ Սակայն այդպիսի մի վտանգ սպառնում է առհասարակ բոլոր Բալկաններին, նաև չէզոք Ռումինիային և Յունաստանին՝ Գերմանիայի և Աւստրիայի կողմից։ Ցաւալի առիթ ենք ունեցել մատնանշելու այն ակներև իրողութեան վրա, թէ ինչպիսի բացայայտ տէնդէնցներ ունեն գերմանական պետութիւնները՝ իրանց իմպերիալիստական քաղաքականութեան թաթերի մէջ առնելու համար ճանապարհի վրա ընկած և status quo-ով պաշտպանուող բալկանեան թզուկներին, որոնց մինչև այժմեան ապահով գոյութիւնը պարտական էր հէնց այն հաւասարակշռութեան սիստեմին, որի վերացման է ձգտում այժմ Գերմանիան։ Բալկանեան պետութիւնները չունեն մտաչափ շահագրգռութիւն, որ եւրոպական պատերազմից դուրս ելնէ Գերմանիան յաղթական դերով։

Սխալ հաշիւների և ճակատագրական որոշումների առաջին քայլն արաւ առ այժմ Բօլգարիան։ Միայն մի ելք կարող է փրկել նրան աւանտիւրայի ողբերգական հետևանքներից՝ ներքին ուժեղ յեղափոխական շարժումը և յաղթական ներգործումները աւանտիւրիստ Ֆէրդինանդ-Ռադօսլավովի կառավարութեան դէմ։ Քառեակ համաձայնութեան յաղթութեան դէպքում՝ Ֆէրդինանդ արքային սպասում է Բօլգարիայում այն վիճակը, ինչ պիտի ունենայ Էնվէր-փաշան Թիւրքիայում։

B. Lucifer

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՆՐ ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 սեպտեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Ֆինանսների մինիստրը արձակեց հետևեալ հրամանը կառավարիչ սենատին, վերաբերեալ ժամանակաւոր թղթադրամներ բաց թողնելուն, ի նկատի ունենալով որ ազգաբնակութիւնը ճնշվում է հնչիւն դրամի պակասութիւնից և որ անհնարին է փողերանոցի համար իսկոյն պատրաստել հնչիւն դրամի անհրաժեշտ քանակութիւն։

Համաձայն 1915 թ. սեպտ. 25-ի մինիստրական օրագրական որոշման, և մինիստրութիւնների կանոնադրութեան 158-րդ յօդուածի հիման վրա, ֆինանսների մինիստրը կարգադրում է բաց թողնել գործածելու համար, մինչև փողերանոցը կը պատրաստէ հնչիւն մանր դրամի անհրաժեշտ քանակութիւն, թղթադրամներ այս հիմունքներով։

1) Մանր թղթադրամները գործադրվելու են արծաթէ ու պղնձէ մանր դրամների հետ համահաւասար կերպով։

2) Մանր թղթադրամները բաց են թողնվում Ռոմանօվների Տան Թագաւորութեան յօբելեանական հանդէսների առիթով պատրաստված 20, 15, 10, 3, 2 և 1 կոպէկանոց պօստային նամականիշների ձևով, երկրորդ երեսի վրա ունենալով այսպիսի մակագրութիւն «գործածական է պղնձէ դրամի հետ համահաւասար»։

3) Ամեն մի մասնաւոր անձն կարող է ընդունել մանրացնելու համար յիշեալ մանր թղթադրամներից ամեն անգամ 3 ռուբլու։ Կառավարական գանձարկղները ընդունում են յիշեալ թղթադրամները ամեն գումարի՝ ամեն տեսակ վճարումների ժամանակ, բացի մաքսային տուրքերից, որոնց վճարումը մանր թղթադրամներով թոյլատրվում է այն գումարի, որ որոշված է մաքսատների կանոնադրութեան մէջ արծաթէ մանրացնելու և պղնձէ դրամների համար։

4) Փչացած մանր թղթադրամը չէ ընդունվում վճարման համար, երբ նրա նկարը չէ որոշվում կամ թէ երբ նա չէ կազմում ամբողջի $^3/_4$-ը։

5) Երբ փողերանոցը պատրաստի հարկաւոր քանակութեամբ հնչիւն մանր դրամ, յիշեալ թղթադրամները վերցվում են գործածութիւնից։

7) Ներկայ կարգադրութիւնը գործադրըվում է հեռագրով։

Ստորագրեց՝ ֆինանսների մինիստրութեան կառավարիչ, մինիստրի օգնական սենատոր Արկ. Նիկօլաէնկօ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 սեպտեմբերի

ԹԵՀՐԱՆ.—Քանի անգլիական զօրքերը մօտենում են Բաղդադին, այնքան մեծ թշնամի պետութիւնների տեղիս ներկայացուցիչները երկիւղ են կրում Թիւրքիայի հետ ուղղակի կապ ունենալու մասին, այդ պատճառով էլ գերմանացի ագիտատորները, առանձնաբար թուլացնելով Աֆղանիստան մուտք գործելու փորձերը՝ որպէսզի այնտեղ տաքէ հանեն մահմեդականներին՝ ստիպված են այժմ իրանց բոլոր ջանքերը ուղղել՝ պահելու իրանց ձեռքում Թեհրանի և Թիւրքայ սահմանի միջև ընկած շրջանը։ Այդ առիթով գերմանացիք սկսել են քանի գործողութիւնների դիմել Ռուսաստանի և Անգլիայի դիպլոմատական ներկայացուցիչների դէմ Համադանում, ուր դրութիւնը դառնում է չափազանց լարված, ի նկատի ունենալով որ այնտեղ կենտրոնացել են մեծ թւով գերմանացիք, որոնց ձեռքով հրոսակախմբեր են կազմակերպվում։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 սեպտեմբերի

ՏՕԿԻՕ. — Ճապոնիայում ուսանող աւելի քան 2000 չին երիտասարդներ բանաձևով հակառակ են հանդէս եկել Չինաստանում միապետութիւնը վերականգնելուն։

Հազրաթը-չէյխի ականջին, քիւրդերը իրանց դէրքը բոլորովին փոխեցին։

Մինչ այդ քիւրդերը անհաշտ և ոխակալ թշնամիներ էին թիւրքերին, թիւրքացածներին և երբէք անկեղծ հաշտութիւն չէր կարող կայանալ այդ ներհակ ցեղերի մէջ. բայց հայերից վրէժ լուծելու, հայութիւնը իր ծննդավայրում ջնջելու և նրանց հողերը բոլորովին գրաւելու նպատակով քիւրդական ցեղապետները որոշեցին հանգամանքից օգտվել, հայերին ջարդել, որոնց միայն կարող էին խառ ու խոչընդոտ հանդիսանալ իրանց ծրագրերի իրականացման։

Քիւրդերը մտածել էին սկզբում թողնել, որ հայն ու թիւրքն իրար կոտորելով երկուսն էլ թուլանան և ապա իրանք կարողանան երկուսին էլ քշել և ամբողջ Հայաստանին տիրել։ Բայց երբ հայերը կառավարութեան իշխանութեան տակ գտնված համիդիէ քիւրդերին սկսեցին անխնայ կոտորել, քիւրդերն էլ վճռեցին հայերին բնաջինջ անել։

Եւ այնպէս առիթ ձեռք գցեցին, որ մասամբ նպատակի հասան։ Այս մասին այնքան ընդարձակ տեղեկութիւններ տպագրվեցին, որ մենք չենք ուզում կրկնել։

Քիւրդ աղալարները, բէկերը հաւաքվեցին Հազրաթը-չէյխի մօտ և ամիսներով խորհրդակցեցին։ Վերջապէս չէյխը վճռեց ջարդել հայերին։ Մինչ Չիբրանցի Շաղին իր ընկերակիցներով յարձակվեց Վերին Բուլանըխի վրա, Հազրաթը-չէյխը 1000 ձիաւորով, Զաման-խանը 1000 ձիաւորով և Մուսա-բէգը 1000 ձիաւորով մտան Ներքին Բուլանըխ։

Հազրաթը չէյխը քիւրդերի համար այնպիսի սրբազնութիւն է կազմում ինքը, իր անձով, որ նրա հրամանները կատարելը ոչ միայն պարտականութիւն է ամեն մի քիւրդի համար, այլ ամեն մի կրմանջ մեծ բաղ-

ելը։ Հազրաթը-չէյխը այնքան պաշտված է ոչ միայն իր ցեղակից, այլ համայն քիւրդերի մէջ, որ նրա անձնաւորութիւնը պաշտաման առարկայ է դարձած։ Ճշմարիտ է, իսլամի վարդապետութեան խիստ ներհակ է մարդապաշտութիւնը, մահկանացուի մէջ անմահութեան նշոյլների հաւատալը սրբապղծութիւն է, բայց քիւրդերն էլ այդքան միւսլիման են, Նրանք դեռ մարդապաշտութիւնից վանմապաշտութեան չեն հասած։

Հազրաթը-չէյխի տաքի կոխած տեղից վերցրած հողն անգամ համբոյրի և ուտելու առարկայ է քիւրդերի համար։ Շէյխի ձիու բերանից թափված փրփուրն անգամ տանում են քիւրդուհիներն իրանց խմորին խառնում։ Շէյխը 8 գիւղում 8 կին է պահում, ամեն մի կնոջ մօտ երկու-երեք դիւժին հարճ ունի։ Դեռ այս բաւական չէ, շէյխը որ գիւղն երթայ, այնտեղի բէկերի համար մեծ բաւականութիւն է տանել իրանց աղջիկները շէյխի վրանը ծառայելու։ Ամեն մի քիւրդի կին ազատ է գնալ շէյխի վրանը խոստովանելու, գանգատվելու և ծառայելու նրան։

Այսպիսի իրաւունքներով օժտված շէյխն այնքան ազդեցութիւն ունի Կ. Պոլսի մեծամեծների և նոյնիսկ սուլթանի վրա, որ շէյխին շարունակ փեշքեշներ է ուղարկում սուլթանը, որպէս զի քիւրդերին ստիպի խալիֆաթի շահերին ծառայելու։ Ոչ միայն մեծ թոշակ է ստանում սուլթանից, այլ և ամենաբարձր օրդէնների է արժանացած, և սուլթանները նրա կամքին ներհակ ոչ մի որոշում չեն կայացրած նրա սահմանակից շրջաններում անգամ։

Այս մարդ-կուռքը մտաւ Ներքին-Բուլանըխ, երբ Վերին Բուլանըխը կործանում էին, ինքն էլ սկսեց հայերին ջարդել և նրանց գոյքը—ցորեն, գարի, խոտ, անասուն կահկարասի, նոյն իսկ շէնքերն ու կալուածնե-

գը գլուխները վար կախած, ամենայն հլութեամբ ծառայում էին իրանց առաջնորդին, որին խոստացել էին ցմահ աջակցել, մինչև իրա ծրագիրն իրականացնելը։

Երբ Վերին-Բուլանըխը լացի ու շիւանի մէջն էր, երբ արիւնը հոսում էր հեղեղի նման, Հազրաթը-չէյխը իր արբանեակներով դաշեց ու այրեց Ներքին-Բուլանըխը։ Միայն քիւրդացողը կարող էր գլուխն ազատել և ուրացողներից շատերին այլ ևս չէին հաւատում, կոտորում էին։ Աւազակ յափշտակիչներն իրանց գազանացած 3000 ձիաւորներով մտան հայկական գիւղերը և սկսեցին զարհուրելի կոտորածները Ներքին-Բուլանըխի շրջանում։

Ինչպէս որ Վերին-Բուլանըխի ժողովուրդը դէպի ռուսական բանակը դիմեց, այդպէս էլ Ներքին-Բուլանըխը ուրիշին դիմելու ոչ հաւատ ունէր և ոչ ճար։ Ով որ հնարքը գտաւ, վերցրեց իր ընտանիքը, ճըլղերն ու կինը, ճանապարհ ընկաւ դէպի Ռուսթէմ-գեաղուկ։ Բայց անողորմ գազաններն այնքան էին կատաղած, որ անխնայ կոտորեցին երիտասարդներին և հասակաւորներին, գերեցին կոյսերին և պատանիներին և փշրեցին մանուկներին։

Ներքին-բուլանըխցիները օչխարի նման չը մորթվեցին. Նրանք դիմադրեցին իրանց դահիճներին հնարաւորից տասն անգամ աւելի ուժով, բայց չը կարողացան տապալել իրանց հալածողներին, փախան։ Փախան, հասան որոնք էլ Ռուսթէմ-գեաղուկ վերին-բուլանըխցիներից մի երկու օր յետոյ։ Սրանք էլ գնացին ռուսական յաղթական բանակի հետ մտան Մանազկերտ, բայց դեռ Բուլանըխները չը նուաճված՝ պարտաւորված էին ետ նահանջելու և Իգդիրից Կովկասի խորքերը ծուալվելու։

Սարգետ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Իւզովկայից, կ. քահ. Դաւթեանի միջոցով, տեղական «Եղբայր. Օգն.» մասնաճիւղից 6 ռուբլի։

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԴՈՒՄԱՅԻ ՆԻՍՏԸ

Երկուշաբթի, սեպտ. 28-ին, տեղի ունեցած քաղ. դումայի նիստում քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը զեկուցեց հետևեալը.

«Սեպտ. 23-ին, մինչև քաղաքային պատգամաւորութեան՝ դումայի և վարչութեան ներկայանալը Նորին Կայսերական Բարձրութեան, համաձայն Նորին Կայսերական Բարձրութեան հրաւէրի՝ ինձ ընդունեցին յատուկ ունկնդրութեան, որ կրում էր բարձր ողորմած բնոյթ դէպի Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը, Քաղաքների Դաշնակցութիւնը և մասնաւորապէս Կովկասի բաժանմունքը։ Իմ քաղցր պարտականութիւնն եմ համարում զեկուցել դումային, որ Նորին Կայսերական Բարձրութիւնը լիակատար վստահութիւն յայտնեց մեր աշխատանքին և նկատեց, որ այսուհետև մեր աշխատանքը յօգուտ ազգաբնակութեան և զօրքի կընթանայ Նորին Կայսերական Բարձրութեան հովանաւորութեան ներքոյ, և պէտք եղած դէպքում քաղաքի և Քաղաքների Միութեան գործերով Նորին Կայսերական Բարձրութեան կողմից ձեր քաղաքագլխին միշտ կը տրվի ունկնդրութիւն, անձնական զեկուցման համար։ Ես երջանիկ եմ նոյնպէս և հաղորդելու, որ Նորին Կայսերական Բարձրութիւնը բարեհաճեց իր հաւանութիւնը յայտնել, որ քաղաքը և Միութիւնը սիրով իրանց ուժերը կը գործադրեն նոր յանձնարարութիւնների կատարման համար, որոնց կարևորութիւնը կարող է զգացվել. յայտնեց նաև շնորհակալութիւն քաղաքի ազգաբնակութեան ցոյց տուած սրտագին ընդունելութեան համար Նորին Կայսերական Բարձրութեան եկած օրը։ Ես հաւատացած եմ, որ իմ հաղորդածը դուման կընդունէ բարոյական բաւականութեան խորին զգացմունքով և այն կը դրէ իր օրագրի մէջ, որպէս ըստ ամենայնի մի գնահատելի նշան այն ուշադրութեան համար, որ ցոյց տուեց Թիֆլիսի ինքնավարութեանը, որն, ի հարկէ, կը լարէ իր բոլոր ուժերը, որպէս զի արդարացնէ իրան ցոյց տուած բարձր ողորմած ուշադրութիւնը և վստահութիւնը»։

Դուման համաձայնվում է արձանագրութեան մէջ մտցնել քաղաքագլխի հաղորդածը։

Օրակարգի հարցերից երկար և բուռն վիճաբանութիւնների տեղիք են տալիս երկու խնդիրներ. մէկը՝ քաղաքային առաջիկայ ընտրութիւնների համար քաղաքը ընտրական մասերի բաժանելու հարցն էր։ Այս խնդիրը դարձել էր որոշ մարդկանց մաքառման նպատակը։ Ինչպէս յայտնի է, ըստ քաղաքային պօլօժէնիայի, քաղ. դումայի իրաւասուների ընտրութիւնը տեղի է ունենալու մի ընտրական կէտում. բայց օրէնքի մէջ ասված է, որ ընտրութիւնների յարմարութեան համար ընտրութիւնները կարող են և մի քանի կէտերում լինել. անցեալ ընտրութիւններին, 1911 թւին, քաղաքը բաժանված էր 7 ընտրական մասերի։ Այս տարի, յունիսի 13-ի նիստում դուման 45 ձայնով ընդդէմ 5-ի որոշել է առաջիկայ ընտրութիւնների համար ևս հին բաժանումը թողնել անփոփոխ։ Բայց դումայի այդ որոշումը նահանգական վարչութիւնը ամբողջութեամբ չէ հաստատել, առաջարկել է դումային 7-ի փոխարէն 8 ընտրական մասեր բաժանել քաղաքը. վիճաբանութեան տեղիք են տալիս քաղաքի II և III ոստիկանական մասերը, որոնք բաժանվում են Դաւիդովսկայա փողոցով։ Ըստ դումայի նախկին որոշման, ոստիկանական այդ երկու մասերում ընտրութիւնները լինելու են մի կէտում։ Այդ մասին պատճառաբանված խօսեց իրաւաբան Վեսելովզորովը. Նրան առարկեց Գոտուան, որ մէջտեղ բերեց ազգային տարբերութեան խնդիրը և գտաւ, որ II և III մասերում ընտրութիւնը պէտք է լինի առանձին կէտերում։ Վերջում Գոտուան յայտարարում է, որ ինքը կողմնակից է 12 ընտրական կէտերին, իսկ իրաւաբան Տիգրանեան, Դօլուխանեան և ուրիշները յայտնում են, որ իրանք կողմնակից են ընտրութիւնների կատարմանը մի կէտում, ինչպէս թելադրում է օրէնքը, և որ այդ մասին կը տան յատուկ կարծիք։ Այդ հարցի մասին խօսում են և Բաբեան, Խաւնունց, Խունդաձէ և ուրիշները։

Քաղաքագլուխը, եզրափակելով բոլոր ճառախօսների ասածները, քուէարկութեան է դնում այն հարցը, թէ արդեօք դուման հաստատում է իր նախկին որոշումը. ճնշող մեծամասնութեամբ դուման հաստատում է քաղաքային ընտրութիւնների 7 կէտերում կատարելու իր նախկին որոշումը։

Վիճաբանութիւնների տեղիք է տալիս և վարչութեան զեկուցումը քաղաքի ազգաբնակութեան պարէնաւորման մասին։ Այդ զեկուցումից պարզվում է, որ քաղաքը առանց մերկանտիլ նպատակների իր վրա է վերցրել ազգաբնակութեան անհրաժեշտ մթերքների՝ ալիւրի, շաքարի, վառելանիւթերի և այլ հայթայթումը։ Խօսող բոլոր իրաւասուներն անխտիր գովասանքով են խօսում վարչութեան եռանդուն և օգտակար գործունէութեան մասին. Բաբեանը առաջարկում է աւելի ընդարձակել գործը և շրջանառութեան համար յատկացված գումարը 100,000-ից աւելացնել։ Վերջում դուման ընդունում է հետևեալ բանաձևը. «Լսելով վարչութեան զեկուցումը պարէնաւորման մասին, դուման խրախուսում է և լիակատար վստահութիւն է յայտնում վարչութեանը և խնդրում է նրան շարունակել և ընդարձակել իր օգտակար գործունէութիւնը մինչև այժմ ունեցած ուղղութեամբ»։

Նիստը փակվում է ժ. 11$^1/_2$-ին։

Գ.

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՑԱՒԵՐԻՑ

III

Մեր ույժերի վերաբերմունքը

Մեր ույժերի վերաբերմունքը դէպի գեղարուեստը գալիս է ապացուցելու, որ իրօք մենք չենք ըմբռնել ժամանակի ոգու պահանջը. մենք չենք աշխատել նախ՝ ստուարացնել մեր շարքերը աշխատանքի իղէալով տոգորված անհատներով և երկրորդ—որ և գլխաւորն է—մենք միանգամայն անգիտաթող ենք արել դրամատիկական գեղարուեստի պահանջները։ Մենք չենք իւրացրել այն միտքը, որ գեղարուեստը չունի հայրենիք, ինչպէս և համայն մարդկութիւնը չէ կարողացել իւրացնել իր նմանին սիրելու իդէան, թէև այդ բոլորը շատ պարզ են հնչում, առանց խորին փիլիսոփայութիւնների ու սիմվօլիզմի, սակայն դրանք մեր ոգու հետ ոչ մի առնչութիւն չունեն։

Գեղարուեստը չունի հայրենիք, մինչդեռ հայ դերասանը սոսկալիօրէն պրկված է և ձևերով, և արտայայտութիւններով ու նիստ ու կացով իր հայրենիքի հետ։

Մեզ մօտ եւրոպական պիէսները վերածվում են ասիականի, որովհետև մենք աշխատանք չենք թափել գերմանականը տարբերել ֆրանսիականից. բոլոր տիպերը մեզ մօտ ներկայացվում են մի շաբլօնով և երբէք չը պէտք է վիրաւորվենք օտար քննադատներից, եթէ մեզ անուանել են կամ անուանեն «ասիացի եւրոպական տարազով»։

Ժամանակակից դերասանից պահանջվում է անդուլ աշխատանք, որպէս զի վերջ ի վերջոյ չը կորվի նա գեղարուեստական աշխարհից, չը սահմանափակվի նեղ շրջանակի մէջ՝ իր վաշխառուների և գիւղական տիպերի ընդօրինակութեամբ։ Չէ որ մենք ունենք ուժեղ բնածին տաղանդներ, որոնք այսօր խոչ են դրել իրանց գոյութեան վրա լոկ այն պատճառով, որ այդ բնածինները ամենաուժեղ կերպով կապված են եղել իրանց տեղական սովորութիւնների հետ և անկարող եղան Պէպօներից, Գիքօներից և Շուշանիկներից դէնն անցնել։ Հետևապէս մեր միակ տենչը պիտի լինի ազատվել մեր միջավայրի կապերից և հանդիսանալ գեղարուեստի պահանջներին համապատասխան արտայայտիչներ։ Բայց թէ որ աստիճանի մենք անտարբեր ենք նման գլխաւոր պահանջի առաջ, դա ուժեղ կերպով ապացուցում է մեզ հետևեալ դառն իրականութիւնը, որով հեղեղված է հայ բեմը. դա սարսափելի հեղեղատ է, սոսկալի համաճարակ, սպանիչ միկրօբներ յանձինս մեր սկսնակ դերասանների։

Ծօ երեխա, հայ դերասան... Անցնում է «եօլա» տանելու օրին, անցնում է «ազգային» Չղի վրա նուագած եղանակի ազ-

դիմացը գեղարուեստի ուժեղ պահանջների վերջին պատնէշը։

Ինչո՞վ ես դիմադրելու... Զէնքերդ ժանգն է կերել. Նրանք ույժազուրկ են եղել, նրանց փայլը վաղուց նսեմացել ու անհետ կորել է։

Մտքիդ թռիչքը, միայն մտքիդ սուր զէնքը կարող է անցնել այդ պատուարի վրայով. և անհրաժեշտ է անցնել, ապա թէ ոչ, կը բռբռնես նրա տակին։ Ահա թէ այսօր որպիսի մտքեր են յուզելու մեզ, տեսնելով թէ ովքե՞ր են լինելու մեր յաջորդները, ումն ենք յանձնում հայ բեմի բարգաւաճման գործը։ Եթէ մենք այսօր մեր պատրաստականութեամբ չենք համապատասխանում գեղարուեստի պահանջներին, ապա ինչ են անելու նրանք, որ կարգին գրել-կարդալ չը գիտեն, մինչդեռ հասարակութեան համար արդէն մի-մի բեռ են դարձել և մեզ նման սկսել են պահանջներ ուղղել։

Միթէ ապագայ հայ դերասանութիւնը պէտք է կազմված լինի անգրագէտ երրորդական և չորրորդական գործակատարներից և գրաշարներից։

Միթէ այս է նոր պահանջը։

Միթէ դրանք են գնալու նոր արշալոյսին հանդիպելու, միթէ դրանք են վերածնելու հայ բեմը, որ իրանց անպատրաստ լինելը յորջորջում են վարագուրել հանճարեղ մարդկանց կենսագրութիւններով, օրինակ բերելով այն հանճարեղ գործիչներին, որոնք լինելով կօշկակարներ կամ փողոցային շրջմոլիկներ, դարձել են մի-մի պատուաւոր սիւներ գեղարուեստական աշխարհի։ Բայց նման համեմատութիւն անողները շարունակ մոռանում են մի բան—որ մեր գործակատար-դերասանները զուրկ են նման հանճարից և երկրորդ՝ համեստութեան և ջանասիրութեան ձգտումից։ Ճիշդ է, պարոնայք, Շալեապինը մեր Թիֆլիսի շրջմոլիկներից է, բայց նրա անդուլ աշխատանքը չենք կարող նմանեցնել մեր հազարաւոր շրջմոլիկների հետ. չեմ խօսում արդէն նրա բնածինի մասին։ Վերջ ի վերջոյ՝ ինչ հաշիւ ունենք բացառութիւնների հետ. խօսքս մեր քրօնիքական հիւանդութեանն է վերաբերում։

Եթէ կանգ չառնենք, եթէ չը փոխենք մեր գործելակերպը, աւելի լաւ կը լինի, որ հէնց այսօր փակվի հայ թատրոնը։ Բաւ է. Նման ուղիով խաբում ենք մեզ, խաբում ենք հասարակութեանը և հեռու վանում մեզանից ինտելիգենտ ույժերին։ Ինչու օր. Սունդուկեան, Քալանթար և ուրիշ շատերը պիտի ծառայեն ռուսաց, և ոչ հայ բեմին։ Միթէ նրանք այնտեղ առաջնակարգ տեղ են գրաւում. ո՛չ։ Մինչդեռ մեզ մօտ նրանք կը լինէին առաջիններից, գուցէ և զարդ հայ բեմի։ Սակայն մեր ստեղծած մթնոլորտն այնչափ խեղդուկ է, որ մեր ինտելիգենցիան աւելի լաւ է համարում լինել նոյն իսկ վերջին օտարի շրջանում, միայն թէ չը զգայ իրան ընկած մեր խճըճված գործի ճիրանների մէջ, որոնց միայն մահ են նիւթում։

Անպայման՝ արուեստի ոգին չէ կարող փակվել նեղ ազգային շրջանակների մէջ. նրան հարկաւոր է տալ ազատ ասպարէզ, հնարաւորութիւն՝ զարգացնելու իր ընդունակութիւնները։

Եւ եթէ մենք նախանձախնդիր ենք հայ բեմի առաջխաղացման գործում, եթէ կամենում ենք, որ նա կանգուն մնայ ապագայում, ապա ուրեմն քանի ուշ չէ՝ մաքրենք հայ բեմը նման հեղեղումներից։ Թող գործակատարները և գրաշարները վերադառնան իրանց պաշտօնատեղերը և մեր կոչը ուղղենք այն անհատներին, որոնք յուսահատ փախել են մեզանից և որոնց պակասը օրէ-ցօր զգալի է դառնում։ Եթէ չաշխատենք ստուարացնել մեր շարքերը պատրաստված անձերով, դա միայն մի բան կապացուցէ, որ մենք կամեցել ենք լինել «ХОЗЯИНЪ»-ներ, այլ ոչ թէ գեղարուեստի արժանավայել ընտրեալներ։

Մի ժամանակ աղմուկ էինք բարձրացնում, որ հայ կնոջ համար փակված է թատրոնի դուռը, զուրկ ենք ինտելիգենտ ույժերից, ապա ինչու այսօր, երբ այդ դուռը բացվել է և նրանք փախչում են մեզանից դէպի ռուսաց բեմը, մենք ոչ մի միջոց չենք ձեռնարկում այդ հոսանքի առաջն առնելու։

Գուցէ վախենում ենք, որ մեր ույժը նսեմանայ, երբ նորերը ժամանակի ոգուն համապատասխան տենչերով ու թռիչքներով կանգնեն մեր շարքերում...

Ջուր երկիւղ։

Պէտք է ուժեղ լինել աշխատելու համար։

Եւ երբ հարցնեն,—ծօ երեխա...

— Աշխատանքի։

Նորերը աշխատանքի մշակներ են։

Բոլոր աշխատաւորները սիրված են գործից։

Ամենքը միասին մի ընդհանուր ույժ են կազմելու, որի առաջ կանգ չի առնի և ոչ մի պատնէշ։

Ազատվենք, միայն թէ կարողանայինք ազատվել մեզ կաշկանդող բիրտ «ես»-ի կապանքներից։ Այդ կապանքներն են, որ մեռցնում են արուեստի ոգին, հեռու վանում հայ բեմից ազատ զարգացման ուղին։ Անհրաժեշտ է, որ ուժեղ կռիւ մղենք հէնց մենք դերասաններս մեր այդ սպանիչ ու աւերիչ հակումների դէմ։ Բացարձակ կռիւ հայ դերասանների երրորդութեան դէմ...

ալին, թող ոչ հեշտասիրութիւնը կարգաւորէ մութ անկիւններից ազատ գեղարուեստի մաքուր ընթացքը, թող ոչ կեղծաւորութիւնը սողոսկէ եւ աղաւաղէ արտիստի վեհ տենչերը։

Ահա այս են պահանջում այսօր մեզանից այն ինտելիգենտ ույժերը, որոնք փախել են մեզանից, և մենք, որ հարուստ ենք հազար ու մի պահանջներով, եթէ իրօք ցանկանում ենք մեր մայրենի բեմի բարգաւաճումը, եթէ մեր ձգտումն է, որ դա լինի եւրոպական գեղարուեստի փնջի մի ծաղիկ, ապա ուրեմն պիտի խոնարհվենք ժամանակի պահանջի առջև։ Միայն գիտակ վերաբերմունքը կարող է մաքուր աշխատանքի ծարաւ զարթեցնել և միայն աշխատանքի մէջ կարող ենք գտնել մաքուր գեղարուեստի սաղմը, որ և կը վերականգնեցնէ հայ բեմը իր փլատակների տակից։ Դիմենք այդ աշխատանքին...

Թող տապալվեն, թող հեռանան մեր շարքերից և այն ուժեղ դերասանները, որոնք չեն ցանկայ մասնակցել մեր այդ միասնական աշխատանքին։

Բաւ է. համոզվենք, վերջապէս, թէ անհատները չեն, որ ույժ են կազմում... Միայն գործի սիստեմատիկ զարգացումից է կախված նրա գեղեցիկ յաղթութիւնը։ Ուժեղները ու թոյլերը թող երեւան այդ աշխատանքի մէջ... Դա է մեր միակ ելքն ու ուղին, մեր միակ փրկութիւնը։

Այժմ անցնենք ռեժիսեօրական բաժնին։

Ամօ-Խարազեան

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Պատերազմից վնասված թիւրքահայերին օգնող Թիֆլիսի վաճառականական կոմիտէն երկրորդ անգամ դիմել է հայ առեւտրաարդիւնաբերական ֆիրմաներին, խնդրելով շարունակել իրանց լուման տալու կոմիտէին։ Մինչև այժմ կոմիտէն ստացել է 6000 ր. դրամով, և մօտ 13,000 ր. ապրանք և իրեր։

Քաղաքների Միութեան կովկասեան ճիւղի լիազօրը իր տրամադրութեան տակ եղած միջոցներից 1500 ր. տաք իրեր է գնել փախստականների համար. այդ իրերը Գ. Ի. Բեբենինվիչ իր հետ տանելու է Դիլման և Սալմաստ՝ փախստականներին բաժանելու։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Կովկասի Փոխարքայ Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչ կիրակի, սեպտ. 27-ին, երեկոյեան մեկնեց ռազմաճակատ։

◆ Յուսիկ արքեպիսկոպոս և Բաբգէն վարդապետ երկուշաբթի օրը վերադարձան Էջմիածին։

◆ Քաղաքային վարչութիւնը Օդեսայում գնել է 50,000 պուդ շաքար, իսկ Փոթիում՝ 15,000 պուդ շաքարաւազ։

◆ Ալիւրի պահեստատէրերը, մօտ 30 հոգի, միջնորդել են քաղաքային վարչութեան առաջ, որ ալիւրի պուդի գինը աւելացվի 20 կոպէկով։ Էժան գնով վաճառելուց նրանք բացէ ի բաց հրաժարվում են, պատճառաբանելով որ ալիւրի գինը տեղում բարձրացել է։

◆ Այսօր, երեկ. ժամը 8-ին, Աշխարհագրական Ընկ. դահլիճում (Մոսկովսկայա № 3) կը կայանայ Մոսկվայի Կայսերական Հնագիտական Ընկ. կովկասեան ճիւղի անդամների նիստը, որտեղ Ս. Տէր-Աւետիսեան կը զեկուցի Գանձակի նահանգում՝ հնագիտական նպատակով իր կատարած ճանապարհորդութեան մասին։

◆ Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսում կազմվում է «Հայ նկարիչների ընկերութիւն»։ Ինիցիատիվը այդ նոր ընկերութեան պատկանում է անուն վաստակած հայ նկարիչներ պ. պ. Թադէոսեանին, Սուրենեանին, Սարեանին և Թէրլէմէզեանին։ Նպատակն է նոր ընկերութեան՝ հաստատել միութեան կապ ցիրուցան հայ նկարիչների մէջ, որոնց թիւը ներկայումս հասնում է մօտ 50-ի, նպաստել բարոյապէս երիտասարդ հայ նկարիչներին և հայ գեղարուեստին։ Ողջունում ենք այդ համակրելի ձեռնարկութիւնը և ցանկանում ենք կազմվող ընկերութեանն աջողութիւն ու երկարատև գոյութիւն։ Գեղարուեստը հայրենիք չունի, ճիշդ է, բայց գեղարուեստագէտները հայրենիք ունեն. և որովհետև առանց ազգային խմորի չը կայ աշխարհի երեսին ոչ մի գեղարուեստ, հետեւաբար զուտ հայ նկարիչների ընկերութիւնը պէտք է արժանանայ ամենայն խրախուսանքի։

◆ Խոլերային հիւանդանոցի տուած վերջին տեղեկութիւնների համաձայն, խոլերայով հիւանդացողների թիւը այս վերջին օրերում նուազել է զգալի չափով։ Առաջ օրական 10—15 հոգի էին մտնում հիւանդանոց, հիմա 2—3 հոգի հազիւ է պատահում. բայց դրա փոխարէն շատ հիւանդացողներ կան դիֆտերիտով, ծաղկով և փորհարինքով։

◆ Սեպտ. 26-ին Թիֆլիսում ստացվեց եգիպտացորեն 1 վագոն, թէյ 120 պուդ, գետնախնձոր 2 վագոն և զանազան կանաչեղէն 2 վ., միրգ. 2 վ., սեխ 3 վագոն։ Ձու ստացվել է 292 պուդ։

◆ Գ. Դաւիթ-խան Ասան-Իւզբաշեանի ամուսին տիկ. Աննա Ալ. Ասան-Իւզբաշեան, որ, ինչպէս յայտնի է, կազմել էր սանիտարա-բժշկական արշաւախումբ, որը այժմ գործում է արեւմտեան ճակատում, ստացել է հետեւեալ նամակը Կամենեց-Պոդոլսկից. «Ես և պլաստունները ջերմապէս շնորհակալ ենք Աննա Ալէքսանդրովնա Իւզբաշեանից, նրա դէպի Կուբանի զաւակները ցոյց տուած սրտագին վերաբերմունքի համար, որոնք շնորհիւ նրա և բժշկական գեղեցիկ խմբի, շնորհիւ ուժեղացրած հոգատարութեան և նրա անդուլ աշխատանքի, պլաստունները ահա 5 ամիս է մայրական հոգատարութեան ջերմութիւն են զգում։ Տիկնոջ կազմած աւտոմօբիլային - սանիտարական օրինակելի խումբն ամէն մի վիրաւորի շնորհակալութեան զգացմունք է ներշնչում յարմարութեան և օրինակելի խնամքի համար։ Ամբողջ հոգով պլաստունները և ես խոնարհվում ենք և շնորհակալութիւն յայտնում հեռաւոր երկիրներից մեր բարեգործուհուն, և բաղդաւոր ենք նրանով, որ թանգագին Աննա Ալէքսանդրովնան ներկայումս իրան լաւ է զգում այն հիւանդութիւնից յետոյ, որ նա ստացել էր դիրքերում, վիրաւորներին խնամելու միջոցին, որոնք անհամբեր սպասում են նրա վերադարձին։ Գեներալ-մայոր Գուլիկա»։

◆ Շաբաթ, հոկտ. 3-ին, հասարակական ակումբում կը կայանայ զրոյց պատերազմի և հասարակութեան ցոյց տուած մասնակցութեան մասին։ Առաջին դասախօսութիւնը կը կարդայ Պետրօգրադից հրաւիրված դասախօս Վ. Վ. Վոդովոզովը սերբ-բուլղարական յարաբերութիւնների մասին։

◆ Մեզ հաղորդում են, որ այս օրերս Ներսիսեան դպրոցի բարձր դասարանների մի աշակերտ ինքնասպանութիւն է գործել և նրա թաղումը կատարվել է կիրակի օրը։ Շնորհիւ այն հանգամանքի, որ դպրոցի վարչութիւնը ամէն միջոց գործ դրեց թաքցնել այդ դէպքը, ինքնասպանութեան պատճառը շատ մեկնութիւնների տեղիք է տալիս։ Առ հասարակ Ներսիսեան դպրոցի ներկայ վարչութիւնը «զամենայն զարշելին ծածկել» սկզբունքի հետեւող է հանդիսանում։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Խվոստովին ներքին գործերի մինիստր նշանակելու առիթով մայրաքաղաքի լրագիրները մատնանշում են, որ Խվոստովը աջակողմեանների պարագլուխն է, բայց որոշ խնդիրներում գործում է անկախ։ Մի ժամանակ նա ծայրայեղ աջակողմեանների ֆրակցիայի նախագահն էր, բայց վերջին ժամանակ խուսափում էր քաղաքական հարցերի մասին հանդէս գալուց։ Այժմ ամենին հետաքրքրում է այն հարցը, թէ նա մնալու է, արդեօք, Պետական Դումայի անդամ։ Իր ճառերից մինում Խվոստովը բաւեն կերպով առարկեց Պետական Խորհրդում Դուրնովոյի յայտնած այն կարծիքին, թէ պէտք է միայն հրամայել։

◆ Ներքին գործերի նախկին մինիստր իշխ. Շչէրբատովի դրութիւնը խախտվեց նրանից յետոյ, երբ նա թոյլատրեց համագեմստվային և համաքաղաքային միութիւնների համագումարները, որոնք կայացրին արդէն յայտնի քաղաքական բանաձեւը։ Դա առիթ տուեց սև բլոկի մամուլին խստագոյնս յարձակվել Շչէրբատովի վրա։ Իշխ. Շչէրբատովը, հակառակ իր նախորդ Մակլակովին, բարեացակամ վերաբերմունք էր ցոյց տալիս դէպի հասարակական նախաձեռնութիւնը։

◆ «Б. В.» ն հաղորդում է, որ ֆինանսական կոմիտէն կողմնակից է բաց թողնելու 50, 15 և 20 կոպէկանոց թղթադրամներ։

◆ Լուրջ ակարացել է յայտնի դատական գործիչ Կոնին։

◆ «Н. В.»-ն հաղորդում է, որ Կրիվօշէինը մօտիկ ապագայում հրաժարվելու է իր պաշտօնից։

◆ Ինչպէս լսում ենք, Մոսկվայի հայկական կոմիտէն հրատարակելու է ռուսերէն մի ժողովածու «Поэзія Арменіи» վերնագրով, որտեղ տպվելու են հայ բանաստեղծութեան լաւագոյն գործերը ռուս գրողների թարգմանութեամբ։ Տպվելու են կտորներ և ռուսահայ ու թիւրքահայ գրականութիւնից, հայ աշուղների երգերից։ Ժողովածուն խմբագրելու է ռուս յայտնի բանաստեղծ Վալերի Բրիւսով։ Ժողովածուին մասնակցելու են ռուս գրողներ Իւրիյ Վեսելովսկի, Իվան Բունին և Ֆ. Սոլոգուբ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ *)

VI

Նախ քան «Հայաստան» առանձին խորագրի տակ իր աշխատութեան երկրորդ մասին անցնելը, ակադեմիկ Մառը, առաջին մասում որպէս նախաբան, տալիս է հայագիտութեան անցեալ և արդի դրութեան վիճակի մասին ամփոփ տեղեկութիւններ։

Կովկասեան աշխարհում կազմակերպվող ազգային կոլլեկտիվներից ամենից հարուստ գտնվող հայկական կոլլեկտիվը,—ասում է հեղինակը,—վաղուց արդէն կորցրել է իր կազմութեան ոչ միայն բազմաբնակչութիւնը, այլ և դասակարգայնութիւնը։ Սա այժմ կովկասեան աշխարհի ամենից հասարակ ներկայացուցիչն է, բայց միևնոյն ժամանակ իր ապրումների բարդութեամբ ամենից դժուար ուսումնասիրելին իր կուլտուր-պատմական լուսաբանութեամբ։ Իր ժամանակակից պարզութեամբ և առանձնացումով, ու ապշելի հոգեկան միօրինակութեամբ հանդիսանալով կովկասեան աշխարհի բազմազանութեան մէջ ուժեղ կօնտրաստ, հայ ժողովուրդը անախորժաբար և անցեալում ներկայացվում է միայնակ, մինչև իսկ օտար շրջապատող աշխարհի մէջ։

Բնական է,—ասում է պ. Մառը,—Հայաստանը՝ Արեւմտեան Եւրոպայի կողմից համեմատաբար աւելի ուսումնասիրութիւնների նիւթ դարձաւ, բայց և նա մնաց ժամանակից դուրս, տարածութիւնից դուրս, և դուրս իր պատմական շրջապատից, իր բնական միջավայրից, որտեղից ուզում էին հանել նրան ինչպէս մի օտար մարմին. կարծես նա որոշ կուլտուրական միջավայրի արիւնից և ոսկորից չէ, կարծես Հայաստանը աշխարհում միայնակ է և առանձնացված է եղել կամ է։ Ստացվում էր պատմութիւն առանց հողի, առանց հիմքի, մինչդեռ հէնց պայծառ արեւելեան ընդարձակ հիմքի վրա է հիւսված ամենաբարդ նախշերի այդ նկարը, այսինքն պատմական Հայաստանի կեանքը. մի կեանք, որ լի է բաղդի փոփոխականութեամբ, յոյսերով և յուսախաբութիւններով, հզօրութեամբ և տկարութեամբ, բարձր թռիչքներով և անկումով մինչև վայրենացում, մինչև նողկալի անտէրութիւն, նոր յոյսերի և նոր հիասթափութիւնների, և յաճախ գերմարդկային ջանքերի ամլութիւն։

Հայաստանը,—շարունակում է յարգոյ հեղինակը,—որ անպայման աւելի ուսումնասիրվել է Եւրոպայում, այդ կողմից քիչ է ծանօթ ռուս լայն հասարակութեան. աւելի ծանօթ չեն և շատ գիտնականներ, նոյն իսկ արեւելագէտներ, որովհետև մինչև այսօր մեր համալսարաններում չը կայ ոչ միայն իսկական ունիվերսալ կրթութիւն, այլ՝ չը կայ ընդհանուր արեւելագիտական կրթութիւն, թէկուզ առանձնապէս եւրոպական «հումանիտար» գիտութիւնների շարքում։

Պատմագէտները շատ լաւ կարող են գիտենալ Հայաստանը որպէս իրանց մասնագիտութեան առարկայի մի մասնիկը, ոմանք որպէս հռոմէական, ապա բիւզանդական տիրապետութիւնների, ոմանք որպէս պարսկական թագաւորութեան կամ խալիֆաթի մի մասը։ Այդ պետութիւնների պատմութեամբ զբաղվող բոլոր գիտնականների համար Հայաստանը գտնվում է նրանց ուսումնասիրութեան օբեկտներից դուրս։ Հայոց ազգը և նրա կեանքն առ հասարակ ետ է մղվում երկրորդ պլան։ Մենք աւելի քիչ իրաւունք ունենք Հայաստանի ներքին կեանքի ճշգրիտ լուսաբանութիւնը սպասելու այն պատմագիրներից, որոնց մասնագիտութիւնն է ուսումնասիրել այդ երկիրը տարերային ույժով ներս խուժած զանգուածների, այսինքն սելջուկների և մոնգոլների պատմութիւնը։ Այդ վերաբերմամբ մենք աւելի կարող էինք յուսադրել խնդրին մօտենալու այն սակաւթիւ գիտնականներին, որոնք զբաղվում են քաղաքակրթութեան պատմութեան այս կամ այն հարցերի լուսաբանութեամբ։ Նրանք լաւ գիտեն հայ ժողովրդին որպէս կուլտուրական արժէքներ ունեցողի. ոմանք, լեզուագէտները, նրան գնահատում են որպէս մարդկութեան մի մասի, որը անդամն է արիօ-եւրոպական ընտանիքի և տէր է հարուստ գրականութեան դեռ V դարից. ոմանք էլ, հին-քրիստոնէութեան հեղինակաւոր պատմաբանները, խորին հետաքրքրութեամբ են վերաբերվում դէպի աշխատանքներն այն ժողովրդի (հայոց), որը եղել է եկեղեցու ինքնաշխատ անդամը։ Իսկ քրիստոնէական արուեստի պատմագիրները պատրաստ են հայ ժողովրդին ընդունելու որպէս ուշագրաւ գեղարուեստական ձեւերի ստեղծագործողի։ Բայց և հին հայկական լուսաւորութեան այս աջողութիւնները գտնվում են յիշեալ մասնագէտների գիտական շահեկանութիւնից մի կողմ։ Հեռու հորիզոնում նրանց կարող են երեւալ հայ ժողովրդի հոգեւոր գրականութիւնը կամ վաստակները, բայց նրանց աչքից վրիպում է հայ կուլտուրական աշխատանքը և օրգանական ներքին աճումը այդ աշխատանքի։ Եւ հարցի այդ կողմի լուսաբանութեանն է, որ պրոֆ. Մառը յատկացնում է իր աշխատութեան երկրորդ մասը։

Գ. Լ.

---

*) Տես «Մշակ» № 213։

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովրդական տուն

Կիրակի, սեպտ. 27-ին, հայկական դրամատիկ խմբակցութիւնը ներկայացրեց «Տասն և եօթ տարեկաններ», դրամա Մաքս Դրայէրի։

Հոգեբանական բարդ հանգոյցներով լի այս թատերագրութիւնը զուրկ չէ բեմական յարմարագոյն տեսարաններից, որոնց պատկերացման ժամանակ երեւան է գալիս դերակատարը և ամենայն հնարաւորութիւն ունի՝ ազատօրէն ամբողջութեամբ արտայայտելու իր ընդունակութիւնները։ Եւ այդ երեկոյ Ժողովրդական Տան բեմի վրա մենք պարզօրէն տեսանք հանդէս եկած դերակատարներին՝ իրանց ույժերի ամբողջական լարումով։

Խարազեանը, ինչպէս և Երամեանը, ցոյց տուին, որ ոչինչ չեն խնայել անթերի հանդէս գալու. բայց առաջինին դարձեալ պակասում էր հոգեկան ապրումների արտայայտման նրբութիւն և խաղի, շարժումների ու ձեւերի ներդաշնակութիւն։ Դերակատարը եթէ հնարաւորութիւն ունենար դահլիճից իրան տեսնել, գուցէ աւելի խիստ դիտողութիւններ անէր։ Երկրորդի՝ Երամեանի մասին պէտք է ասել, որ նա շնորհքով է տանում իր դերերը, բայց երբեմն չէ կարողանում իրան տիրապետել և ձայնին ուղղութիւն տալ։

Գուրօշը, որ մեծ մասամբ վերցնում է ծերունիների դերերը, միշտ պատկերացնում է դանդաղաշարժ, ծանրախօս ալևորների, դա արդէն նրա համար դառնում է բանալ դեր և կորցնում է հետաքրքրութիւնը։

Կանացի ույժերից, լաւ էր տիկ. Ցասմիկը, հմտալից շարժումներով, աչքերի գրաւիչ խաղով և ձայնի համաչափ ներդաշնակութեամբ։

Օր. Կարախանեանը, որ սկզբում մտել էր իր դերի մէջ, վերջում շեղումներ գործեց. բայց այս անգամ աւելի լաւ էր, քան նախորդ ներկայացմանը։

Զ.

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բօրժօմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից — 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից — 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բօրժօմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկինի, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերարուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-Բ.ԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—159

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեօնովսկայա փող., № 18 (Վօրօնցովի արձանի մօտ)։ Բժշկի բնակարան. Սեմեօնովսկայա, № 16.
(Հ. ու. կ.) 1018. 100—87

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՈՒՍՄԱՆՈՂՈՒՀԻ
ցանկանում է պաշտօնավարել հայ դպրոցներում՝ գիւղում կամ քաղաքում։ Դիմել՝ Նուխի՝ օր. Ջանիբէկեանին։
690. 2—1

ՍՈՍԿԱԼԻ ՏԱՆՋԱՆՔՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ ԻՆՉՊԷՍ ԵՆ ՄԵՌՆՈՒՄ ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐԸ

Ջղային հիւանդները մեռնում են սրտի թուլութիւնից, ողնաշարի ուղեղի բորբոքումից, ուղեղի փափկանալուց, մասամբ խելագար դրութեան մէջ կամ ինքնասպանութեամբ յաճախ արբեցողութեան հետեւանքներից, ալկոհոլիզմից, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ձգտում հիւանդի կողմից գինով խեղդելու հիւանդութեան երեւան գալը։ Ջղային հիւանդութիւնների նշանները ի միջի այլոց հետեւեալներն են. դիւրագրգռութիւն, վատ տրամադրութիւն, վերջաւորութիւնների դողդողումն, սրտի թրթռոց, գլխի պտոյտ, անքնութիւն, վերջաւորութիւնների ընդարմացում կամ կաշուի որոշ մասերի անզգայութիւն, կաշուի սուր զգայութիւն, կոկորդի, ձեռների և յօդերի ցաւեր, կրծքի ճնշումն, յիշողութեան թուլութիւն, ականջների աղմուկ, տարօրինակ ցանկութիւններ և այլն։ Աւելի ծանր դէպքերում պատահում են մտաւոր կեանքի խանգարումները։ Ջղային հիւանդութիւնները գլխի և ողնաշարի ուղեղային հիւանդութիւններ են։ Անչափ աշխատանքի, վշտի հոգսի, վախի կամ ընդհանրապէս առողջապահութեան կանոնները խանգարելու պատճառով ջղային սիստէմը թուլանում է։ Յաճախ այդ թուլութիւնը ժառանգական բնոյթ է կրում։ Ուժասպառութեան այդ դրութիւնները պէտք է վերացնել սիստեմատիկ կերպով ամրացնելով ջղային սիստեմը, մատակարարելով օրգանիզմին այն սննդարար նիւթը, որը անհրաժեշտ կը համարվի ջղերի համար.

Իսկ դա ֆօսֆօրն է, որ տարիների ընթացքում աստիճանաբար պակասում է մեզանից, ուրեմն հարկաւոր է այդ պակասը լրացնել։

Պարիզի յայտնի բժիշկ Գէլզին երկար աշխատանքից և փորձերից յետոյ աջողվել է պատրաստել միակ դեղը, որը պարունակում է իր մէջ մեծ քանակութեամբ ֆօսֆօր. այդ դեղը կոչվում է Ստիմուլոլ, որը վերականգնում է կորցրած երիտասարդութիւնը, առողջութիւնը և ընդհանուր ջղայնութիւնը և թուլութիւնը. արտասահմանի և Ռուսաստանի յայտնի պրօֆեսօրները, բժիշկները և հիւանդները տուել են իրանց գովասանքը և շնորհակալութիւնը և այժմ զանազան սանատօրիաներում և հիւանդանոցներում բժշկում են հիւանդներին Պարիզի յայտնի բժիշկ Գէլզի հանճարեղ դեղով՝ Ստիմուլոլով... Ահա ինչ են գրում Ստիմուլոլի բժշկութեան մասին բժիշկները.

Իսկական Ստիմուլոլը պատրաստվում է Ֆրանսիայում (Պարիզում), ամեն մի սրվակը ունի գործարանի դրոշմը՝ Institut „D-r Calvet Paris“. Մի տուփը բաւական է, որ դուք զգաք նրա հրաշալի գործողութիւնը եւ դուք կը ստանաք ձեր ուզած եռանդը եւ առողջութիւնը. դեղերի հետ ուղարկվում է բոլոր եւրոպական և Ռուսաստանի պրօֆեսօրների, բժիշկների, հիւանդների գովասանքները և շնորհակալական նամակները։

Պատուէրները, փողը և նամակները ուղարկել 1) Тифлисское отдѣленіе Института доктора Кальве, Тифлисъ, Эриванск. площ., Пушкинская 3, верхній этажъ, отд. 11|1 (խնդրեմ հասցէն գրել լրիւ, ինչպէս որ ռուսերէն գրված է)։ Մէկ տուփը արժէ 7 րուբ., ճանապարհածախսով և վերադիր վճարով 50 կոպ. աւելի արժէ։ Ով ուղարկի 7 ր. փողը առաջուց լրիվին, ճանապարհածախս չի վճարում։

Իմ պրակտիկայի միջոցին «Ստիմուլոլով» բժշկումն անխտիր բոլոր դէպքերում տուել է փայլուն արդիւնք։ Անհամար քայքայումների Ստիմուլոլի օգնութեամբ կլինիքական բժշկման կատարած մեր դէպքերը տասնեակներից աւելի են, չը հաշւելով հիւանդանոց այցելող հիւանդներին։

Մեր դիտողութիւններով միշտ պատրաստ ենք Ձեզ ծառայելու։

«Ջղային ու ներքին հիւանդութիւնների կլինիկա» Բժ. Ժակ Լերու-Սինօ։

Վերադիր վճարով ուղարկվում է միայն 2 ր. 50 կ. կանխավճար ստանալուց յետոյ։

Գլխաւոր պահեստը ամբողջ Անդրկովկասի համար— Интернаціональное медико-фармацевтическое депо, Тифлисъ, Эриванск. пл., № 3.

(Հ.) 609. 10—3

Լոյս տեսաւ
Բ. ԻՇԽԱՆԵԱՆ
„Աղէտի եւ տառապանքի աշխարհից“
(Այց թիւրքահայ փախստականներին)
78 եր. գինը 40 կ.
Արդիւնքը յատկացվում է Տ. Նազարեանի ճաշարանի օգտին։
Գրքերի պահեստը Տ. Նազարեանի մօտ. դիմել նաև՝ «Գուտենբերգ», Կենտրոնական և «Գիրք» գրախանութներին։ Իսկ Բագւում „Сотрудникъ“ (Сегаль) և „Посредникъ“ գրավաճառներին։ (օ. մ.) 692. 10—1

Երեւանի թեմական դպրանոցի բարձր դասարանների ռուսաց լեզուի (19 դաս), ռուսաց պատմութեան (4 դ.), և Ռուս. աշխարհագրութեան (2 դ.) համար հրաւիրվում է բարձրագոյն կրթութեամբ ուսուցիչ։ Մասնագէտներին՝ դասագին 65-ական, ոչ-մասնագէտներին 60-ական ր.։ Գրաւորների համար 5-ական աւելի։ Դիմել հեռագրով։
688. 2—1 Հոգաբարձութիւն

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՀԻՄՆ. Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
(Երկու սեռի համար)
Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ., № 24.
Խնդիրների ընդունելութիւնը ամեն օր 10—12 ժ. առ., ժ. 5—7 երեկ.։
Պարապմունքները կը սկսվեն սեպտեմբերի 21-ից։
Տեղեկութիւնները տրվում և ուղարկվում են ձրի։
589. 0—14
(Հ. ու. Հ.)

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.